ՀՀ ԳԱԱ «ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԱԿ ՊՈԱԿ

ԶՈՐԱՅՐ ԶՈՐԻԿԻ ՄԱՐԴԻՅԱՆ

ԿՈՂՄՆԱՅԻՆ ՌԱԴԻԿԱԼ ՈՒՄ ՉՀԱԳԵՑԱԾ ԽՄԲԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԷՆԱՆՏԻՈՄԵՐԱՊԵՍ ՀԱՐՍՏԱՑՎԱԾ ՈՉ ՍՊԻՏԱԿՈՒ ՑԱՅԻՆ ՆՈՐ ԱՄԻՆԱԹԹՈՒՆԵՐԻ ՍԻՆԹԵԶ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Բ.00.10. - «Կենսօրգանական քիմիա» մասնագիտության
քիմիական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
քիմ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ս. ՍԱՂՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 4

ԳԼՈՒԽ1. ՈՉ ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ԱՄԻՆԱԹԹՈՒՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
(ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ) ---------- 9
1.1. Ոչ սպիտակուցային α-ամինաթթուների կիրառման ոլորտները -------- 9
1.2. Ամինաթթուների կենսամիմետիկ սինթեզ ---------- 15
1.2.1 Բնական սինթեզ՝ պիրիդոքսալ ֆոսֆատկախյալ ֆերմենտների մաս-նակցությամբ ---------- 15
1.2.2 ՊՖ-կախյալ ֆերմենտների կենսամիմետիկ մոդելներ ---------- 18
1.3. Կատալիտիկ ասիմետրիկ սինթեզ ---------- 21
1.4. Ամինաթթուների ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզ ---------- 26
1.5. Քրոս-համակցման ռեակցիաներ ---------- 30
ԳԼՈՒԽ2. ԿՈՂՄՆԱՅԻՆ ՌԱԴԻԿԱԼՈՒՄ ՉՀԱԳԵՑԱԾ ԽՄԲԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԷՆԱՆՏԻՈՄԵՐԱՊԵՍ ՀԱՐՍՏԱՑՎԱԾ ՈՉ ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ՆՈՐ ԱՄԻՆԱԹԹՈՒՆԵՐԻ ՍԻՆԹԵԶ
(ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ) ---------- 33
2.1 Էլային ամինաթթվային կոմպլեքսների սինթեզը ---------- 33
2.2 Էլեկտրոֆիլ Cα-ալկիլման ռեակցիաների հետազոտումը ---------- 35
2.2.1 *(S)*-α-պրոպարգիլ գլիցինի α-տեղակալված նմանակների ասիմետրիկ սինթեզը ---------- 35
2.2.2 (S)-α-ալիլանինի α-տեղակալված նմանակների ասիմետրիկ սինթեզը ---------- 39

2.2.3 Գլիցինի α,α-*բիս*-տեղակալված աքիրալ նմանակների սինթեզը ------ 43

2.3 Տերմինալային ալիլային խմբի հենքի վրա Հեքի քրոս-համակցման հետազոտումը: Կողմնային ռադիկալում ալկենային կամրջակով կապված ոչ սպիտակուցային α-ամինաթթուների սինթեզը ---------- 45

2.4 Տերմինալային կինային խմբի հենքի վրա Սոնոգաշիրայի քրոս-համակցման հետազոտում: Կողմնային ռադիկալում ացետիլենային կամրջակով համակցված տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված *(S)*-α-ամինաթթուների սինթեզը ---------- 50

2.5 Ֆենիլալանինի հենքի վրա Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիայի հետազոտում: Կողմնային ռադիկալում համակցված արոմատիկ խմբե-րով էնանտիոմերապես մաքուր *(S)*-α-ամինաթթուների սինթեզը ---- 60

2.6 α,α-*Բիս*-ալիլգլիցինի ալիլային խմբերի հենքի վրա Հեքի քրոսս-համակցման հետազոտությունը ---------- 63

2.7 Կողմնային ռադիկալում չհագեցած կապեր պարունակող (*R*)-α-ամի-նաթթուների սինթեզ: Քիրալային ԲԱՀՔ (HPLC) անալիզ---------- 65

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՍ ---------- 69

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 138

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 140

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Այսօր հայտնի դեղանյութերի գրեթե 40%-ը հանդիսանում են քիրալային միացություններ, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում օպտիկապես ակտիվ α-ամինաթթուները և դրանցից կազմված պատրաստուկները: Առանձնահատուկ ուշադրության են արժանի ոչ սպիտակուցային α-ամինաթթուները, որոնք ֆերմենտների ոչ դարձելի ինհիբիտորներ են և ծառայում են որպես բազմաթիվ հիվանդությունների բուժման միջոց: Հայտնի են բազմաթիվ հակավիրուսային, հակաքաղցկեղային, հակահիպերտենզիվային և այլ ազդեցության դեղապատրաստուկներ, որոնց դեղաբանորեն ակտիվ ագլիկոնը ոչ սպիտակուցային ամինաթթու է, կամ դրանցից կազմված պեպտիդ: Ոչ սպիտակուցային ամինաթթու-ների կարևորագույն յուրահատկություններից է դեղերի ազդեցության պրոլոնգացումը (երկարաձգումը)՝ շնորհիվ օրգանիզմի ֆերմենտային համակարգերի համար դրանց օտարածին բնույթի, ինչը օգտագործվում է հակաքաղցկեղային և այլ ակտիվության դեղանյութերի կառուցման գործընթացներում: Նման կարգի միացությունների շարքում վերջին ժամանակներս լուրջ հետաքրքրություն են առաջացրել կողմնային ռադիկալում չհագեցած խմբեր (ալկինային, ալկենային, բենզոլային և այլն) պարունակող ոչ սպիտակուցային α-ամինաթթուները, որոնց հայտնի տեսականին խիստ սահմանափակ է:

Ուշագրավ է, որ քիրալային դեղանյութերի շարքում անհրաժեշտ դեղաբանական ակտիվություն է ցուցաբերում

օպտիկական իզոմերներից միայն մեկը, որի օպտիկական անտիպոդը, որպես կանոն հիմնականում ցուցաբերում է բացասական դեղաբանական ազդեցություն: Հետևաբար, կողմնային ռադիկալում չհագեցած խմբեր (ալկինային, ալկենային, արիլային և այլն) պարունակող էնանտիոմերապես մաքուր α-ամինաթթուների ստացումը և հետազոտումը ժամանակակից կենսաօրգանական և դեղագործական քիմիայի հրատապ արդիական խնդիրներից է:

Նախկինում էնանտիոմերապես հարստացված ոչ սպիտակուցային α-ամինաթ-թուների սինթեզի համար օգտագործվել են Ni^{II} իոնի հարթ-քառակուսային կոմպլեքս-ները, կազմված ամինաթթուների և բնական պրոլին ամինաթթվի հենքի վրա կառուցված քիրալային օժանդակ ռեագենտի Շիֆի հիմքերից: Այդ կոմպլեքսները ստերեոքիմիապես իներտ են, օժտված են ամինաթթվային մնացորդի բավարար CH-թթվայնությամբ և բարձր էնանտիոսելեկտիվությամբ անկախ հետազոտվող ռեակ-ցիայի բնույթից, արդյունքում ապահովում են նպատակային ամինաթթվի անհրաժեշտ ստերեոիզոմերի բարձր էնանտիոմերային ավելցուկի (*ee*≥90%) առաջացումը: Ընդ որում, *(S)*-պրոլինի հենքի վրա կառուցված քիրալային օժանդակ ռեագենտը մակածում է *(S)*-α-ամինաթթուների ասիմետրիկ սինթեզը, իսկ *(R)*-պրոլինի քիրալային ռեագենտը՝ *(R)*-α-ամինաթթուների ասիմետրիկ սինթեզը:

Օրգանական քիմիայում C-C կապի գեներացման համար լայնորեն կիրառվում են sp^2-հարթ կարբանիոնի էլեկտրոֆիլ Cα-ալկիլման, Սոնոգաշիրայի, Հեքի, Սուզուկիի քրոս-համակցման (Csp-Csp^2, Csp^2-Csp^2) և այլ ռեակցիաներ:

Ատենախոսական աշխատանքում որպես սուբստրատներ (ելային ամինաթթվա-յին սինթոններ) օգտագործվել են Ni^{II} իոնի հարթ-քառակուսային ամինաթթվային կոմպլեքսները, իրականացվել են դրանց ամինաթթվային մնացորդների վերը նշված փոխանակման ռեակցիաները: Արդյունքում սինթեզվել է կողմնային ռադիկալում ալկինային, ալկենային, արիլային և այլ տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված էնանտիոմերապես մաքուր *(S)*- և *(R)*-α-ամինաթթուներ:

Աշխատանքի նպատակը: Ատենախոսական աշխատանքի նպատակն է *(S)*-BPB ((*S*)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզոֆենոն) քիրալային օժանդակ ռեագենտի և ամինաթթուների Շիֆի հիմքերի հետ Ni^{II}-իոնի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսների հենքի վրա հետազոտել դրանց ծայրային ալկինային, ալկենային, ֆենիլային և այլ չհագեցած խմբեր պարունակող ամինաթթվային մնացորդների էլեկտրոֆիլ Cα-ալկիլման, Սոնոգաշիրայի, Հեքի և Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիաները՝ նպատակ ունենալով սինթեզել կողմնային ռադիկալում տարաբնույթ տեղակալված չհագեցած կապերով էնանտիոմերապես մաքուր նոր ոչ սպիտակուցային *(S)*-α-ամինաթթուներ:

Նպատակին հասնելու համար աշխատանքում նախատեսված էր լուծել հետևյալ խնդիրները.

- Սինթեզել կողմնային շղթայում ծայրային ալկինային, ալկենային և ֆենիլային մնացորդներ պարունակող *(S)*-α-ամինաթթուների և *(S)*-BPB քիրալային օժանդակ ռեագենտի Շիֆի հիմքերի նիկելային կոմպլեքսները (նախկինում մշակված մեթոդներով):
- Հետազոտել կոմպլեքսների ամինաթթվային մնացորդների էլեկտրոֆիլ Cα-ալ-կիլման ռեակցիաները, իրականացնել α-դիրքում ալիլային և պրոպարգիլային մնացորդներ պարունակող ամինաթթուների (ալանինի, արոմատիկ օղակում տեղակալված ֆենիլալանինների) ասիմետրիկ սինթեզ:
- Հետազոտել միևնույն ալկիլող ագենտով գլիցինի կոմպլեքսի երկտեղակալման ռեակցիաները, իրականացնել կողմնային շղթայում չհագեցած խմբերով α,α-*բիս*-տեղակալված գլիցինի աքիրալ նմանակների սինթեզը:
- Հետազոտել *(S)*-α-ալիլգլիցինի և *(S)*-α-ալիլալանինի կոմպլեքսների ամինա-թթվային մնացորդների ծայրային ալկենային խմբի և տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված արիլբրոմիդների միջև Հեքի քրոս-համակցման ռեակցիաները: Մշակել կողմնային ռադիկալում էթիլենային կամրջակով կապակցված տարբեր տեղակալիչներով (ֆենիլային, նաֆթիլային և այլն) ալիլային խմբեր պարունակող *(S)*-α-ամինաթթուների

(ալանինի և α-մեթիլալանինի) էնանտիոմերապես հարստացված նմանակների սինթեզի մեթոդներ:

- Հետազոտել α-դիրքում տեղակալված *(S)*-α-պրոպարգիլգլիցինի կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի ծայրային ալկինային խմբի և տարաբնույթ տեղակա-լիչներով տեղակալված արիլբրոմիդով Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիաները: Մշակել կողմնային ռադիկալում ացետիլենային կամրջակով կապակցված տարբեր բնույթի տեղակալիչներով (ֆենիլ, նաֆթիլ, թիոֆեն, խինոլին և այլն) արիլային մնացորդ պարունակող *(S)*-α-ամինաթթուների սինթեզի մեթոդներ:
- Հետազոտել *պ*-հալոգեն տեղակալված *(S)*-β-ֆենիլ-α-ալանինի կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի և տեղակալված ալկինների միջև Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիան (ալկինային խումբը գտնվում է ոչ թե ամինաթթվային սուբստրատում, այլ ալկիլող ագենտում): Մշակել կողմնային ռադիկալում ֆենիլային մնացորդի հետ ացետիլենային կամրջակով կապակցված *(S)*-β-ֆենիլ-α-ալանինի տարաբնույթ տեղակալված նմանակների սինթեզի մեթոդներ:
- Հետազոտել *պ*-հալոգեն տեղակալված *(S)*-β-ֆենիլ-α-ալանինի կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված արիլբորաթթուների միջև Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիաները: Մշակել կողմնային ռադիկալում անմիջապես ֆենիլային մնացորդի հետկապված այլ արոմատիկ խմբեր (տեղակալված ֆենիլ, նաֆթիլ, խինոլին, թիոֆեն և այլն) պարունակող *(S)*-ֆենիլալանինի էնանտիոմերապես հարստացված նմանակների սինթեզի մեթոդ:
- Ստանալ սինթեզված նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների *(R)*-բացարձակ կոնֆիգուրացիայով օպտիկական անտիպոդները և քիրալային ԲԱՀՔ անալիզի մեթոդով որոշել դրանց էնանտիոմերային մաքրության աստիճանը:

Գիտական նորույթը: Ատենախոսական աշխատանքում օգտագործելով նախկինում սինթեզված *(S)*-2-[N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզոֆենոն (BPB) քիրալային օժանդակ ռեագենտի և ամինաթթուների Շիֆի հիմքերի հետ Ni^{II} իոնի

առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսների յուրահատկությունները և օրգանական քիմիայում հայտնի Սոնոգաշիրայի, Հեքի և Սուզուկիի քրոս-համակցման մեթոդաբանությունը: Առաջին անգամ նման համակարգերում իրականացվել է ծայրային ալկենային, ալկինային և բենզիլային խմբեր պարունակող ամինաթթուների էլեկտրոֆիլ Cα-տեղակալման, և ծայրային չհագեցած կապին քրոս-համակցման ռեակցիաները: Արդյունքում հայտնի մեթոդները մշակվել և կիրառվել են կողմնային շղթայում չհագեցած խմբերով (էթիլենային, ացետիլենային, ֆենիլային) համակցված տարաբնույթ տեղակալիչներ պարունակող էնանտիոմերապես մաքուր նոր ոչ սպիտակուցային *(S)*-α-ամինաթթուների սինթեզի համար:

Գործնական արժեքը: Ni^{II} իոնի ամինաթթվային կոմպլեքսների հիման վրա մշակված α և β-տեղակալված ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի մեթոդներն այսօր ներդրված են ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտարտադրական կենտրոնի փորձարարտադրական կայանում, որտեղ արեպարատիվ քանակներով արտադրվում են ալիֆատիկ և արոմատիկ տեղակալիչներով նոր օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային *(S)*- և *(R)*-α-ամինաթթուներ (*(S)*-2-ամինո-4-պենտենաթթու, *(R)*-2-ամինո-4-պենտենաթթու, *(S)*-2-ամինո-2-մեթիլ-4-պենտենաթթու, *(R)*-2-ամինո-2-մեթիլ-4-պենտենաթթու, *(S)*-2-ամինո-2-մեթիլբութանաթթու, *(R)*-2-ամինո-2-մեթիլբութանաթ-թու, *(S)*-2-ամինո-3-հիդրոքսի2-մեթիլբութանաթթու, *(2S,3R)*-2-ամինո-3-հիդրոքսի-4-մե-թիլպենտանաթթու և այլն):

Ելնելով միջազգային շուկայի պահանջարկից իրատեսական է սույն ատենախոսական աշխատանքում մշակված մեթոդների ներդրումը կենտրոնի փորձարարտադրական կայանում ստեղծված փոքրածավալ արտադրական գծում՝ կողմնային ռադիկալում ալկինային, ալկենային և այլ չհագեցած խմբեր պարունակող էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուների արեպարատիվ արտադրության կազմակերպման և արդյունքների ապրանքայնացման նպատակով:

Նախատեսվում է նաև իրականացնել սինթեզված նոր ամինաթթուների բժշկակենսաբանական սկրինինգ, ինչպես նաև

դրանց նմուշները օգտագործել պեպտիդների բաղադրության մեջ ներմուծելու համար: Անշուշտ, սկրինինգի արդյունքում բացահայտված պոտենցիալ ակտիվ միացությունները կորող են կիրառական նշանակություն ունենալ դեղագործության, կենսատեխնոլոգիայի, կենսաքիմիայի և այլ ոլորտներում:

Աշխատանքի փորձարկումը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվել են 2 միջազգային ժողովներում. 3rd International Scientific Conference on “Dialogues on Sciences”. Yerevan 2015, p. 133. V Научная конференция Армянского химического общества (с международным участием) АХО-5: “Актуальные задачи фундаментальной и прикладной химии”. Ереван 2017, с. 92.

ԳԼՈՒԽ 1.

(ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Ոչ սպիտակուցային ամինաթթուների ստացման եվ կիրառման ոլորտների ուսումնասիրություն

1.1. Ոչ սպիտակուցային α-ամինաթթուների կիրառման ոլորտները

Ամինաթթվային պատրաստուկներն ունեն լայն կիրառություն բժշկության, դեղագործության, սննդարդյունաբերության, տնտեսության և այլ բնագավառներում: Դրանք տարբեր դեղապատրաստուկների և կենսաբանորեն ակտիվ միացությունների կարևորագույնն բաղադրիչներից են [1-2]: Մինչև 20-րդ դարի

երկրորդ կեսն ամինաթթուները հիմնականում անջատում էին սպիտակուցների հիդրոլիզատներից, իսկ այսօր ամինաթթուների արտադրական տեխնոլոգիաները հիմնված են կենսատեխնոլոգիական (մանրէաբանական, կենսատրանսֆորմացիայի, էնզիմատիկ և խառը քիմիաէնզիմատիկ) մեթոդների վրա [3]: Անհրաժեշտ է նշել, որ ոչ սպիտակուցային ամինաթթուների հանդեպ հետաքրքրությունը ևս ակնառու է [4,5]: Ներկայումս համաշխարհային շուկայում օպտիկապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուների իրացման ծավալները գումարային կազմում են շուրջ 17 մլրդ. ԱՄՆ դոլար՝ տարեկան մինչև 13 % աճի տեմպով [6]: Ոչ սպիտակուցային ամինաթթուների արտադրության ծավալների մեծացումը պայմանավորված է դրանց կիրառման ոլորտների բազմազանությամբ, դրանցից են՝ դեղանյութերի [7-9], սննդային հավելումների [10,11], կերերի [12,13], քիրալային կատալիզատորների [14,15] և այլ արտադրություններ:

Սակայն այսօր հայտնի կենսատեխնոլոգիական մեթոդները պիտանի չեն օրգանիզմի ֆերմենտային համակարգի օտարածին բնույթի քիրալային նյութերի սինթեզի համար՝ վերջինիս սուբստրատների ոչ բնական կառուցվածքի պատճառով: Իսկ դասական քիմիական սինթեզի արդյունքում ստացվում են ռացեմատ խառնուրդներ, որոնց բաժանումն օպտիկապես ակտիվ իզոմերների արդյունավետ և իրատեսական չէ: Հայտնի է, որ գրեթե բոլոր բնագավառներում (բժշկություն, դեղագործություն, սննդարդյունաբերություն և այլն) ամինաթթուները պիտանի են կիրառության համար միայն օպտիկապես մաքուր իզոմերների տեսքով: Հետևաբար, ամինաթթուների արտադրության համար այսօր արդարացված են այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք կարող են ապահովել վերջնական արգասիքների բարձր օպտիկական մաքրություն:

Հայտնի է, որ կենսաբանորեն ակտիվ քիրալային մոլեկուլների օպտիկական անտիպոդները որպես կանոն օժտված են իրարից խիստ տարբերվող ֆիզիոլոգիական հատկություններով: Օրինակ՝ ակտիվ ցավազրկող և քննաբեր *Talidomide* դեղամիջոցի դեղաբանորեն ակտիվ նյութը հանդիսանում է *(R)*-(+)-թալիդոմիդը,

որի օպտիկական անտիպոդը՝ *(S)*-(-)-թալիդոմիդը օժտված է տերատոգեն (հրեշածին) ազդեցությամբ [16]: Կամ, օրինակ՝ ծխախոտում պարունակվող ձախպտտող նիկոտինը մի քանի անգամ թունավոր է դրա աջ պտտող նմանակից [17] (նկար 1):



Նկար 1*. Նիկոտինի օպտիկական անտիպոդների կառուցվածքը:*

Որոշ ամինաթթուների օպտիկական իզոմերները միմյանցից տարբերվում են նաև համային ցուցանիշներով, օրինակ՝ *(S)*-լեյցինը և *(S)*-թիրոզինը ունեն դառը համ, իսկ դրանց *(R)*-իզոմերները քաղցրահամ են [18]:

Հարկ է նշել, որ ժամանակակից դեղաշուկայում պահանջված են էնանտիոմերապես մաքուր քիրալային դեղապատրաստուկները, որոնց չափաբաժինն այսօր կազմում է բժշկական պրակտիկայում կիրառվող բոլոր հայտնի դեղամիջոցների ավելի քան 40%-ը: Դա է պատճառը, որ վերջին ժամանակներս դեղարտադրող ընկերությունները ահռելի ֆինանսական միջոցներ են հատկացնում այնպիսի արտադրական տեխնոլոգիաների մշակմանը, որոնք ի վիճակի են ապահովել դեղապատրաստուկի նպատակային էնանտիոմերի առաջացումը՝ բարձր էնանտիոմերային ավելցուկով (*ee*>98%) [19]:

Բնական մետաբոլիտների արտադրության մեջ լայնորեն կիրառվում են կենսատեխնոլոգիական մեթոդներ, իսկ դրանց ոչ բնական նմանակների ստացման համար հաջողությամբ զարգանում է ասիմետրիկ սինթեզի ուղղությունը [20]: Նման կարգի միացությունների շարքին են պատկանում նաև ոչ սպիտակուցային ամինաթթուները, որոնց արտադրության հիմնական ուղղությունը ասիմետրիկ սինթեզն է [21]: Անհրաժեշտ է նշել, որ եթե մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը ասիմետրիկ սինթեզը համարվում էր էկզոտիկ պրոցես, ապա այսօր այն հայտնի դեղագործական ընկերությունների կողմից կիրառվող հիմնական մեթոդն է [22,23]:

Ոչ սպիտակուցային են համարվում այն ամինաթթուները, որոնք չունեն սեփական փոխադրող ՌՆԹ կամ համապատասխան նուկլեոտիդային տրիպլետ և չեն ներդրվում սպիտակուցի պոլիպեպտիդային շղթայում: Դրանցից շատերը համարվում են միկրոօրգանիզմների երկրորդային մետաբոլիզմի միջանկյալ կամ վերջնական արգասիքներ: Ոչ սպիտակուցային ամինաթթուները կարելի է դասակարգել բնածին և արհեստածին միացությունների, որոնք ընդհանուր առմամբ սպիտակուցային ամինաթթուների ածանցյալներ են: Ներկայումս հայտնի են 1000-ից ավել բնածին ոչ սպիտակուցային ամինաթթուներ, որոնք հայտնաբերվել են մանրէների, սնկերի բջիջներում, բուսական և կենդանական հյուսվածքներում: Դրանց հիմնական մասն ունեն ալիֆատիկ կառուցվածք՝ ոչ երկար կողմնային շղթայով [24-26]: Արհեստածին էնանտիոմերապես հարստացված ոչ սպիտակուցային ամինաթթուները ստանում են հիմնականում սինթետիկ ճանապարհով՝ օգտագործելով ասիմետրիկ քիմիական կամ խառը քիմիաէնզիմատիկ սինթեզի մեթոդները:

Ոչ սպիտակուցային ամինաթթուների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կողմնային ռադիկալում տարբեր կառուցվածքի տեղակալիչներ պարունակող α-ամինաթթուները, որոնք որպես կարևոր դեղաբանորեն ակտիվ ագլիկոն, մտնում են հակաքաղցկեղային, հակահիպերտենզիվային, ցավազրկող, հակաալկահոլային և այլ կարևոր դեղամիջոցների կազմի մեջ [27]: Օրինակ՝ հակաուռուցքային հակաբիոտիկ *Leucinostatin A*-ն պարունակում է *(S)*-α-մեթիլ-α-ամինոպրոպիոնաթթվի մնացորդներ [28], *o*-մեթիլ-*L*-թրեոնինը կիրառվում է ֆիզիոլոգիապես ակտիվ 3-*o*-մեթիլթրեոնիլօքսիտոցին պեպտիդի սինթեզում [39], *(S)*-α-ամինաթթուների β-N-ամինոտեղակալված որոշ ածանցյալներ մտնում են *Tuberactinomycine, Bleomycine, Edeine, Capreomycine Abatinib, Canertinib* հակաբիոտիկների բաղադրության մեջ [30]: Տարբեր կառուցվածքի β-հիդրօքսի-α-ամինաթթուները համարվում են ֆիզիոլոգիապես ակտիվ ցիկլիկ պեպտիդների կարևոր բաղադրիչներ (*Vancomycine* և այլն), ինչպես նաև՝ ֆերմենտների ինհիբիտորներ [31]: Օրինակ՝ *D-ալլո*-թրեոնինը մտնում է *Katanosins* և *Accurninaturn* հակաբիոտիկների

բաղադրության մեջ [32,33], իսկ (+)-*Lactacystin* [34] և *Cyclosporin* [35] հակաբիոտիկները պարունակում են β-հիդրոքսիլեյցինի մնացորդներ: α-Տեղա-կալված ցիստեինները կիրառվում են ծծումբ պարունակող ֆիզիոլոգիապես ակտիվ պեպտիդների սինթեզի ռեակցիաներում [36], իսկ *D-ալլո*-իզոլեյցինի ներմուծումը *Dactinomycine-D* հակաբիոտիկի կազմի մեջ վերջինիս հաղորդում է հակաքաղցկեղային ակտիվություն [37]: Ստորև ներկայացված են Ոչ սպիտակուցային ամինաթթուների հիման վրա կառուցված որոշ դեղամիջոցներ:


Afatinib


Paclitaxel


Ciclosporin


Canertinib


Spiraprile


Ramipirle


Perindoprile


Qinaprile


Lisinoprile


Enalaprile

Սիմպատոմիմետիկ N-կարբոքսիֆենիլպրոպիլլիզինը հանդիսանում է *Lysinoprile* հակահիպերտենզիվային դեղի կարևոր բաղադրիչը [38], *L*-լիզինի, *L*-օքսիպրոլինի և *D*-ֆենիլալանինի ածանցյալները մտնում են *Leuprolide*, *Octreotide* և *Tuftsin* հակաքաղցկեղային դեղապատրաստուկների բաղադրության մեջ և

այլն:

Որոշ ոչ սպիտակուցային ամինաթթուներ անմիջապես համարվում են պատրաստի դեղանյութեր և դրանցից պատրաստում են տարատեսակ դեղապատ-րաստուկներ: Օրինակ, α-մեթիլ-*L* կամ *D*-տրիպտոֆանը օգտագործվում է ստաֆիլո-կոկային ինֆեկցիաների բուժման համար, α-մեթիլ-*L*-ֆենիլալանինի և α-մեթիլ-*L*-տրիպտոֆանի խառնուրդը օժտված է վառ արտահայտված հակահիպերտոնիային ակտիվությամբ [39], β-ֆտոր-*D*-ալանինը կիրառվում է դաշտային վիրաբուժությունում արյունահոսության արագ կանխման համար [40], *L*-2-մեթիլ-3,4,5-տրիհիդրոքսի-ֆենիլալանինը օժտված է հակաքաղցկեղային ակտիվությամբ [41] և այլն:

Ոչ սպիտակուցային α-ամինաթթուները նպատակաուղղված օգտագործում են նաև դեղերի ազդեցության երկարացման համար: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ պեպտիդային բնույթի դեղապատրաստուկի բաղադրության մեջ սպիտակուցային ամինաթթվի փոխարինումը նրա ոչ սպիտակուցային նմանակով, բերում է դեղի ազդեցության խիստ պրոլոնգացմանը, ինչը օգտագործվում է հակաքաղցկեղային և այլ ազդեցության դեղանյութերի ստացման գործընթացներում [42]:

Որոշ α-տեղակալված α-ամինաթթուներ լայնորեն կիրառվում են էնզիմալոգիայում: Դրանք հանդիսանում են որոշ ֆերմենտների յուրահատուկ արգելակիչներ և հաջողությամբ կիրառվում են ֆերմենտների ազդեցության մեխանիզմների պարզաբանման գործընթացներում [43]: Ոչ սպիտակուցային ամինաթթուները որպես սպիտակուցային ամինաթթուների նմանակներ, հաջողու-թյամբ կիրառվում են նաև մանրէաբանության մեջ՝ սպիտակուցային ամինաթթուների ակտիվ շտամարտադրիչների սելեկցման գործընթացում [44,45]:

Ամինաթթուների ^{11}C և ^{18}F իզոտոպով նիշակրված ոչ սպիտակուցային նմանակները որպես ռադիոֆարմպրեպարատներ, վերջերս մեծ հետաքրքրություն են առաջացրել պոզիտրոնային էմիսիոնային տոմոգրաֆիայում (ՊԷՏ): Դրանք հաջողությամբ կիրառվում են տարբեր հիվանդությունների արագ և արդյունավետ ՊԷՏ-ախտորոշման գործընթացում [46-48]: Ստորև ներկայացված են

որոշ ^{18}F նիշակրված ամինաթթուներ, որոնք ակտիվ ՊԷՏ-ռադիոպոզիտրոններ են (ռադիոտեղափոխադրիչներ) [49]:



[^{18}F]-FET



[^{18}F]-FDOPA



[^{18}F]-MeFTyr

Ոչ սպիտակուցային ամինաթթուների շարքում առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացրել կողմնային շղթայում չհագեցած խմբեր (ալկինային, ալկենային, վինիլային և այլ) պարունակող ամինաթթուները: Գրական տվյալների վերլուծությունից հետևում է, որ դեղագործության մեջ պոտենցիալ լուրջ հետաքրքրություն կարող են ներկայացնել կողմնային ռադիկալում չհագեցած խմբեր պարունակող օպտիկապես ակտիվ ամինաթթուները: Հայտնի են ացետիլենային ամինաթթուներ, որոնք հիմնականում անջատված են սնկերի բջիջներից: Օրինակ, *(S)*-2-ամինաբութ-3-ինաթթուն (պրոպարգիլ գլիցին), որն անջատված է *Streptomyces catenula* ճառագայթասնկերից, հանդիսանում է *Saccharomyces cerevisiae, Escherichia coli* [50] և ամիլազների սինթեզի ինհիբիտոր, պիրիդոքսալ ֆոսֆատ կախյալ ֆերմենտների ինակտիվատոր [51], ինչպես նաև համարվում է *FR 900130* հակաբիոտիկի դեղաբանորեն ակտիվ բաղադրիչը [52]: *(S)*-2-Ամինոհեքս-4-ինաթթուն անջատված է *New Guninea* սնկից և օժտված է ԱԵՖ-ի նկատմամբ կարգավորիչ, և արգելակիչ ազդեցությամբ [53], *(S)*-2-ամինո-4-մեթիլ հեքս-5-ինաթթուն և (*2S,4R*)-2-ամինո-4-հիդրոքսիհեպտ-6-ինաթթուն անջատված *Euphoria longa* բույսի սերմերից, օժտված են հակամուտագենային ակտիվությամբ [54], *Streptomyces* ճառագայթասնկերից անջատված *(S)*-2-ամինոպենտ-4-ինաթթուն [55], օժտված է հակաբակտերիալ ակտիվությամբ, ինչպես նաև ինհիբացնում է տրանսսուլֆոնացման ուղին և γ-ցիստատիոնազ ֆերմենտի ակտիվությունը [56]:

1.2. Ամինաթթուների կենսամիմետիկ սինթեզ

1.2.1. Բնական սինթեզ՝ պիրիդոքսալ ֆոսֆատկախյալ ֆերմենտների մասնակցությամբ

Ժամանակակից կենսամիմետիկ քիմիայի արդիական խնդիրներից է ֆերմենտների ազդեցության հայտնի մեխանիզմների կիրառումը պարզ քիմիական համակարգերում պրոքիրալային նախորդներից քիրալային մոլեկուլների ասիմետրիկ սինթեզի իրականացում, ինչը նախատեսում է առաջին հերթին ֆերմենտների կենսամիմետիկ մոդելների մշակում և ներդրում [57]:

Պիրիդոքսալ ֆոսֆատ (ՊՖ) պարունակող ֆերմենտները, որոնք օրգանիզմում ամինաթթուների մետաբոլիզմի հիմնական պատասխանատուներն են, կատալիզում են ամինաթթուների տարաբնույթ փոխարկումներ (ռացեմացում, դեկարբոքսիլում, տրանսամինում, էլիմինացում, տեղակալում, ալդոլային կոնդենսում, ռետրոալդոլային ճեղքում և այլն):

20-րդ դարի երկրորդ կեսին կենսաքիմիական հետազոտությունների արդյունքների հիման վրա առաջարկվել է պիրիդոքսալային կատալիզի հավանական մեխանիզմը (սխեմա 1), [58,59]:

Սխեմա1



Այդ մեխանիզմի համաձայն, ամինաթթուների սինթեզի

առանցքային փուլը ֆերմենտի ակտիվ կենտրոնում ամինաթթվի (սուբստրատի) և պիրիդոքսալ ալդեհիդի միջև **1** Շիֆի հիմքի առաջացումն է: Վերջինիս ամինաթթվային մնացորդի α-պրոտոնի պոկման հետևանքով առաջանում է **2** հարթ կարբանիոն, որի էլեկտրոնային խտությունը բաշխվում է այնպես, որ առավելագույն բացասական լիցքը կենտրոնացվում է ամինաթթվային մնացորդի α-ածխածնի ատոմի վրա: Ամինաթթվի ցվիտերիոնային վիճակի հաշվին α-ածխածնի ատոմի մոտ առաջանում է ուժեղ էլեկտրոնաակցեպտոր խումբ, որը կարողանում է կայունացնել **2** հարթ կարբանիոնը: Վերջինս ենթարկվում է ալդոլային կոնդեսման՝ առաջացնելով β-օքսի-α-ամինաթթվի (*Ser*, *Thr*) և ՊՖ-ի Շիֆի հիմք, որը α,β-էլիմինազ ֆերմենտների ազդեցությամբ պոկում է ջուր և վերածվում դեհիդրոամինաթթվի (դեհիդրոալանինի կամ դեհիդրոկարա-գաթթվի) և ՊՖ-ի **3** Շիֆի հիմքի: Վերջինիս դեհիդրոամինաթթվային մնացորդին հեշտությամբ միանում են տարբեր նուկլեոֆիլներ՝ առաջացնելով նոր ամինաթթվի և ՊՖ-ի **4** շիֆային հիմքեր, որոնք հիդրոլազների ազդեցությամբ անջատում են β-դիրքում տեղակալված նոր *(S)*-α-ամինաթթուներ [60,61]:

Այսպիսով, ֆերմենտը կատալիզում է ռեակցիայի ընթացքը միայն մեկ ուղղությամբ: Ապոֆերմենտի դերը այնպիսի կայուն միկրոհետերոգեն համակարգի ստեղծումն է, որը պարունակում է իոնական, կովալենտ և հիդրոֆոբ փոխազդե-ցություններով ֆիքսված ՊՖ և ապահովում է ամինաթթվային փոխարկումների արագ և ստերեոսելեկտիվ ընթացքը: Այս գաղափարի իսկությունը հստակեցվել է Դանաթանի ստերեոէլեկտրոնային հիպոթեզով [62], որը բացատրում է ֆերմենտների ազդեցության ընտրողական բնույթը: 1980-ական թվականներին Ֆլոսի և Վեդերասի [63,64] կողմից իրականացված հետազոտությունները հաստատեցին Դանաթանի հիպոթեզը, համաձայն որի նման համակարգերում β-էլեկտրոնաակցեպտոր տեղակալիչի հեռացումն ու համապատասխան նուկլեոֆիլների կամ էլեկտրոֆիլների միացումը տեղի է

ունենում ֆերմենտի ակտիվ կենտրոնում ֆիքսված ամինաթթվային մնացորդի Շիֆի հիմքի հարթության միայն մեկ կողմից, ինչը և բերում է ասիմետրիկ սինթեզի [65]:

Պիրիդոքսալ ֆերմենտների ազդեցության մեխանիզմների ընդհանուր օրինաչափություններից կարելի է եզրակացնել հետևյալը. α-ամինաթթուն պիրիդոքսալի հետ առաջացնում է կայուն Շիֆի հիմք, որը փոխարկվում է ակտիվ նուկլեոֆիլ CH-թթվի կամ էլեկտրոֆիլի՝ դեհիդրոամինաթթվի, որն էլ մասնակցում է համապատասխանաբար էլեկտրոֆիլ տեղակալման կամ նուկլեոֆիլ միացման Cα-ալկիլման ռեակցիաներին՝ առաջացնելով ավելի բարդ կառուցվածքով օպտիկապես ակտիվ α-ամինաթթուներ: Ստորև բերված է ֆերմենտի ակտիվ կենտրոնի ՊՖ-ի և ամինաթթվի Շիֆի հիմքի քիրալային շրջափակումը ապոֆերմենտով (էնանտիսելեկտիվային էֆեկտ):



Իսկ ամինաթթվային փոխարկումների ստերեոքիմիան լիովին վերահսկվում է ֆերմենտի ակտիվ կենտրոնի քիրալային շրջափակմամբ՝ ապոֆերմենտով, ինչն էլ ապահովում է պիրիդոքսալային կատալիզի բոլոր ռեակցիաների (տեղակալման, էլիմինացման, միացման և այլն) ընտրողական ընթացքը Շիֆի հիմքի հարթության միայն մեկ կողմից [66]:

Պիրիդոքսալային կատալիզի մեխանիզմների ուսումնասիրման արդյունքների վերլուծությունը ցույց են տվել, որ ֆերմենտի ակտիվ կենտրոնում Շիֆի հիմքի առաջացման շնորհիվ համակարգը ձեռք է բերում հետևյալ կարևոր հատկությունները.

- բավարար ամրություն (ներմոլեկուլային ոչ կովալենտային

փոխազդեցությունների հաշվին), ստերեոքիմիական իներտություն;

- ամինաթթվային մնացորդի բարձր CH-թթվայնություն և դեհիդրոամինաթթվային մնացորդների բավարար էլեկտրոֆիլություն՝ C-ալկիլման ռեակցիաների օրինաչափ ընթացքի համար;
- բարձր էնանտիոսելեկտիվություն՝ ապոֆերմենտով ֆերմենտի ակտիվ կենտրոնի քիրալային շրջափակման շնորհիվ:

1.2.2. ՊՖ-կախյալ ֆերմենտների կենսամիմետիկ մոդելներ

Հաշվի առնելով 1.2.1. ենթաբաժնում նշված դրույթները՝ ակնհայտ է, որ ամինաթթուների ասիմետրիկ կենսամիմետիկ սինթեզի իրականացման համար առաջին հերթին պետք է ստանալ ՊՖ-ֆերմենտների արդյունավետ մոդելային համակարգեր, որոնց մոտ բավարար չափով արտահայտված կլինեն վերը նշված երեք դրույթները: Որպես ֆերմենտների կենսամիմետիկ մոդելային համակարգեր, սովորաբար օգտագործում են սինթետիկ օրգանական մոլեկուլներ՝ օժտված ֆերմենտային համակարգերին բնորոշ հատկություններով ու առանձնահատ-կություններով [67]:

Ըստ գրական տվյալների, ֆերմենտների պարզ մոդելային համակարգերի դերում ավելի հաճախ օգտագործվում են անցումային շարքի մետաղների ամինաթթվային կոմպլեքսները, որտեղ ամինաթթվային մնացորդը կապված է մետաղի իոնի կոորդինացիոն թաղանթի հետ կայուն Շիֆի հիմքի համակարգով: Նման կոմպլեքսներում ապոֆերմենտի դերը կատարում է մետաղի իոնը, իսկ ֆերմենտի ակտիվ կենտրոնի ֆունկցիոնալ խմբերի (լիգանդի) դերը՝ պիրիդոքսալային ալդեհիդը կամ դրա որևէ կարբոնիլային նմանակը (օրինակ՝ սալիցիլալդեհիդը): Մասնավորապես, սինթեզվել և հետազոտվել են Co^{II}, Cu^{II} և Ni^{II}-իոնների տետրաէդրիկ կամ հարթ-քառակուսային և Co^{III}, Al^{III}, Fe^{III}-իոնների օկտաէդրիկ կոմպլեքսները՝ տարբեր կառուցվածքի և ծագման կարբոնիլային լիգանդների Շիֆի հիմքի պարունակությամբ [68, 69]: Ստորև ներկայացված են անցումային շարքի մետաղների իոնների օկտաէդրիկ

սալիցիլիդենային կոմպլեքսների կառուցվածքը (M=Al^{III}, Co^{III}, Fe^{III}): Առավել լավ արդյունքներ են արձանագրվել Co^{III} և Al^{III} իոնների *բիս*-պիրիդոքսալիդենային և *բիս*-սալիցիլիդենային օկտաէդրիկ կոմպլեքսների՝ որպես ՊՖ-կախյալ ֆերմենտների մոդելային համակարգեր հետազոտման արդյունքում: Ցույց է տրվել, որ դրանց կառուցվածքում կոորդինացիոն կապերը և վալենտային անկյունները բավական ամուր են և ապահովում են կոմպլեքսների անհրաժեշտկայունությունն ու ստերեոքիմիական իներտությունն ամինաթթվային փոխարկումների ընթացքում:



I



II

Բացի դրանից, կոմպլեքսների ամինաթթվային մնացորդները բավական ակտիվ CH-թթուներ են և հիմքերի ներկայությամբ ալկիլալոգենիդներով հեշտությամբ ենթարկվում են Cα-ալկիլման: Մասնավորապես, Co^{III} և Al^{III}-իոնների *բիս*-սալիցիլիդենային օկտաէդրիկ կոմպլեքսները հետազոտել են գլիցինի մնացորդի Cα-ալկիլման, ալդոլային կոնդենսման, դեյտերման ու էպիմերման, թրեոնինի մնացորդի ռետրոալդոլային ճեղքման [70] և դեհիդրատման [71] ռեակցիաներում: Իսկ Co^{III}-իոնի *բիս*-սալիցիլիդենային օկտաէդրիկ **6** կոմպլեքսների օրինակի վրա հետազոտվել են գլիցինի մնացորդի Cα-ալկիլման ռեակցիաներն ալկիլալոգենի-դներով և մինչև 30% էնանտիոսելեկտիվությամբ իրականացվել են *(S)*-ֆենիլալանինի և *(S)*-ալանինի ասիմետրիկ սինթեզներ, (սխեմա 2):

Սխեմա 2



(6)

R =R$_1$= H or Me;
R$_2$ = Me, C$_6$H$_5$CH$_2$;
B = Na$_2$CO$_3$.

Պարզվել է, որ անցումային շարքի մետաղների իոնների կոմպլեքսների կիրառմամբ շատ ամինաթթվային փոխարկումների ստերեոքիմիական մեխանիզ-մները միանշանակ համընկնում են պիրիդոքսալային ֆերմենտների մասնակցությամբ արձանագրված հայտնի կենսաքիմիական տվյալների հետ:

Ֆիշերը և աշխատակիցները ուսումնասիրել են գլիցինի *բիս*-(պիրիդոքսիլի-դենգլիցինատ)կոբալտատ (III) կոմպլեքսում ամինաթթվային մնացորդի տարբեր կապերի խզման ռեակցիաները և պարզել, որ այդ կոմպլեքսներում գլիցինի մնացորդի ջրածնի երկու ատոմների պոկման արագությունները տարբեր են [72]:

Ավելի ուշ, Յու. Բելոկոնի և աշխատակիցների կողմից սինթեզվել են *(S)*-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզալդեհիդ (BBA) (**7**), *(S)*-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոացետո-ֆե-նոն (BPA) (**8**) և *(S)*-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզոֆենոն (BPB) (**9**) քիրալային օժանդակ ռեագենտների և ամինաթթուների Շիֆի հիմքերի հետ Ni^{II} իոնի առաջացրած հարթ քառակուսային կոմպլեքսները, որը ներկայացված է ստորև:



(7-8)

R = H, Ni^{II}-(*S*)-BBA-Gly ***(7)***
R = CH$_3$, Ni^{II}-(*S*)-BPA-Gly ***(8)***
R = C$_6$H$_5$, Ni^{II}-(*S*)-BPB-Gly ***(9)***

Այդ կոմպլեքսները, որպես ՊՖ-կախյալ ֆերմենտի մոդելային

համակարգեր, հետազոտվել են ամինաթթվային մնացորդի տարաբնույթ փոխանակման ռեակցիաներում: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ այդ կոմպլեքսները ՊՖ առավել արդյունավետ մոդելային համակարգեր են, ինչպես ստերիոքիմիական իներտության և տեխնոլոգիական մատչելիության, այնպես էլ ռեակցիաների ստերեոսելեկտիվության տեսանկյունից: Ընդ որում, առավել բարձր արդյունքներ են արձանագրվել վերջնական արգասիքների թե՛ օպտիկական մաքրության և թե՛ քիմիական ելքի առումով *(S)*-BPB (**9**) քիրալային օժանդակ ռեագենտի հիման վրա կառուցված Ni^{II}-իոնի հարթ-քառակուսային ամինաթթվային և դեհիդրոամինաթթվային կոմպլեքսների կիրառման դեպքում (*ee*≥90%): Այս կոմպլեքսներն ավելի մանրամասն կքննարկվեն ատենախոսական աշխատանքի հաջորդ բաժիններում:

1.3. Կատալիտիկ ասիմետրիկ սինթեզ

Կատալիզի տարբերակներից է ասիմետրիկ կատալիզը, որի ժամանակ կիրառվում է քիրալային կատալիզատորներ: Ի տարբերություն սովորական քիմիական կատալիզատորների, քիրալային կատալիզատորների հիմնական առաքելությունը ոչ թե ռեակցիայի արագացումն է, այլ ռեակցիայի ստերեոսելեկտիվ ընթացքի ապահովումը: Արդյունավետ են այն քիրալային կատալիզատորները, որոնց կատալիտիկ քանակներով (100-1000 *մոլ* սուբստրատ/1 *մոլ* կատալիզատոր) ապահովում են նպատակային արգասիքի բարձր էնենտիոսելեկտիվային ավելցուկը (*ee*>90%):

Ասիմետրիկ է կոչվում այն սինթեզը, որի ընթացքում էնանտիոմերներից մեկն առաջանում է ավելցուկով՝ այն կարող է լինել քիմիական և էնզիմատիկ: Ասիմետրիկ սինթեզը կարող է ընթանալ ինչպես նոր քիրալային կենտրոնի մակածմամբ, որը տեղի է ունենում, երբ աքիրալ մոլեկուլը կամ դրա մնացորդը սինթեզի ընթացքում դառնում է քիրալային, այնպես էլ ելային քիրալային կենտրոնի փոփոխմամբ, այսինքն՝ քիրալային ածխածնի ատոմի շուրջ տեղակալիչների փոփոխմամբ: Ասիմետրիկ սինթեզի ընթացքը

կարող է պայմանավորված լինել ինչպես տարածական, այնպես էլ ստերեոէլեկտրոնային գործոններով: Ասիմետրիկ սինթեզի արդյունավետությունը գնահատվում է սինթեզի ստերեոսելեկտիվությամբ կամ ասիմետրիկ ելքով՝ ռեակցիայի ընթացքում առաջացած անհավասար քանակներով էնանտիոմերների հարաբերակցությամբ: Ստերեոսելեկտիվ ռեակցիաների մեխանիզմների բացահայտման առաջին փորձերն իրականացվել են անցյալ դարի 50-ական թվականներին Պրելոգի [74] և Կրամի [75] կողմից:

Կախված օգտագործվող քիրալային նյութի (ինդուկտորի) քանակությունից, ասիմետրիկ սինթեզը կարող է լինել ստեխիոմետրիկ կամ կատալիտիկ: Ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում օգտագործվում է քիրալային օժանդակ ռեագենտը, սուբստրատի համեմատ ստեխիոմետրիկ քանակությամբ (1/1 մոլային հարաբերությամբ), իսկ կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի պրոցեսներում՝ օգտագործվում է քիրալային կատալիզատոր սուբստրատի քանակության համեմատ 1/100-1000 մոլային հարաբերությամբ:

Գրականության մեջ նկարագրված են ամինաթթուների կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի բազմաթիվ մեթոդներ՝ հիմնված տարբեր քիրալային կատալիզատորների կիրառման վրա: Սույն բաժնում կդիտարկվեն դրանցից առավել տարածված և նշանակալի մեթոդները:

Շիորին և աշխ. իրականացրել են **10** *տրեո*-N-ացիլ-β-հիդրոքսի-α-ամինաթ-թուների ստերեոսելեկտիվ դեհիդրատացումը Մարտինի սուլֆուրանի ներկայությամբ [76,76], (սխեմա 3):

Սխեմա 3



Հայտնի են դեհիդրոամինաթթուների էնանտիոսելեկտիվ հիդրման մի շարք աշխատանքներ, որտեղ որպես քիրալային կատալիզատոր օգտագործվել են տարբեր ֆոսֆորային լիգանդներ

պարունակող ռոդիումի միացություններ [77-80]: Որպես քիրալային լիգանդներ ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում հաճախ օգտագործում են *(S,S)*-Chirophos (**11**), *(R)*-Binap (**12**), *(S,S)*-Bppm (**13**), *(R,R)*-Deguphos (**14**), *(S,R)*-Bppfa (**15**), *(R)*-Duphos (**16**), *(R,R)*-Dipamp (**17**) և այլն: Ընդորում, *(S)*- կամ *(S,S)*-կոնֆիգուրացիայով քիրալային լիգանդները հիդրման արդյունքում ապահովում են (*R*)-α-ամինաթթուների առաջացումը, իսկ *(R)*- կամ *(R,R)*- կոնֆիգուրացիայով լիգանդները՝ (S)-α-ամինաթթուների սինթեզը:



(*S,S*)-Chiraphos (**11**)



(*R*)-Binap (**12**)



(*S,S*)-Bppm (**13**)



(*R,R*)-Deguphos(**14**)



(*S,R*)Bppfa (**15**)



(*R*)-Duphos (**16**)



(*R,R*)-Dipamp (**17**)

Անհրաժեշտ է նշել, որ *(S,S)*-Bppm և *(R,R)*-Deguphos լիգանդները հիդրման ռեակցիաներում ապահովում են գերազանց կատալիտիկ ակտիվություն և լայնորեն կիրառվում են արտադրության մեջ [81]: Տարբեր սուբստրատներում դեհիդրոամինաթթվային մնացորդների C=C կապի հիդրման ռեակցիաների վրա է հիմնված *Bifinomicine A* [82], *Bifinomicine B* [83] հակաբիոտիկների և դրանց ածանցյալների [84] արտադրական սինթեզները:



Bifinomicine A



Bifinomicine B

20-րդ դարի վերջերին կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի բնագավառում առավել հետաքրքրություն են առաջացրել միջֆազային կատալիզի (ՄՖԿ) պայմաններում ընթացող ասիմետրիկ

սինթեզի ռեակցիաները: Իրար հետ փոխազդող միացությունները տարբեր ֆազերում գտնվելու պատճառով շատ հաճախ ռեակցիաները չեն ընթանում, իսկ միջֆազային կատալիզատորները ապահովում են այդպիսի ռեակցիաների ընթացքը:

Ասիմետրիկ միջֆազային կատալիզի բնագավառում մեծ առաջընթաց էր 1984 թվականին հրատարակված Դոլլինգի աշխատանքները [85], որտեղ որպես քիրալային միջֆազային կատալիզատորներ կիրառվել են բնական *Cinchona* ալկալոիդների դասին պատկանող ցինխոնիդինը, ցինխոնինը, խինինը, խինիդինը, ինդանոնը և դրանց ածանցյալները [86-91]:

Սխեմա 4



Օ'Դոնելլը և աշխ. մշակել են օպտիկապես ակտիվ ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի եղանակ, որն հիմնված է գլիցինի և ալանինի էսթերների Շիֆի հիմքերի էնանտիոսելեկտիվ ալկիլման վրա՝ միջֆազային կատալիզի պայմաններում [92], (սխեմա 4):

Միջֆազային կատալիզի ռեակցիաներում առավել հաճախ կիրառվող որոշ կատալիզատորների կառուցվածքը նկարագրված են ստորև:



ՄՖԿ օգտագործվող որոշ քիրալային կատալիզատորների կառուցվածքը:

Պրոֆեսոր Յու.Ն. Բելոկոնը [93] և աշխ. որպես քիրալային միջֆազային կատալիզատոր օգտագործել են *(R,R)*-TADDOL (**22**) և *(S)*-NOBIN (**23**) քիրալային կատալիզատորները *(R,S)*-ալանինի իզոպրոպիլ էսթերի և բենզալդեհիդի Շիֆի հիմքի (իմինի) ալկիլման ռեակցիաներում [94,95]:



(*R,R*)-TADDOL (**22**)



(*S*)-NOBIN (**23**)

(R,R)-TADDOL-ը (**22**), որպես ՄՖԿ կիրառվել է նաև դեհիդրոալանինի և (2-բեն-զոիլֆենիլ)ամիդոպիրիմիդիլ-2-կարբոնաթթվի (PBP) Շիֆի հիմքի հետ Ni^{II} իոնի առաջացրած աքիրալային **24** կոմպլեքսի դեհիդրոամինաթթվային մնացորդի էլեկտրոֆիլ C=C կապին տարբեր նուկլեոֆիլների միացման ասիմետրիկ ռեակ-ցիաներում [96-98], (սխեմա 5): Արդյունքում հաջողվել է մինչև 98% էնանտիոմերային ավելցուկով սինթեզել β-դիրքում տեղակալված *(S)*-α-ամինաթթուներ:

Կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի բնագավառում մեծ հետաքրքրություն են ներկայացնում անցումային շարքի մետաղների քիրալային կոմպլեքսները: Արդյունավետ կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի իրականացման համար պետք է ունենալ մատչելի և ակտիվ քիրալային կատալիզատոր, որը կկարողանա ընտրողաբար տարբերել քիրալային մոլեկուլների էնանտիոտոպ կողմերը:

Սխեմա 4



Այդ կոմպլեքս-կատալիզատորներում կարևոր է ոչ միայն մետաղի իոնը, այլ նաև քիրալային լիգանդների կառուցվածքը: Լիգանդը պետք է պարունակի մետաղի իոնի հետ կապվելու համար հարմար ֆունկցիոնալ խմբեր և համապատասխան մոլեկուլային սիմետրիայի տարրեր:

Բացի նշված կոմպլեքսներից, հայտնի են նաև անցումային շարքի այլ մետաղների (Co^{II}, V^{IV}, Ti^{VI}, Pd^{II}, Rt և այլ) սալենային կոմպլեքսներ, որոնք, որպես քիրալային կատալիզատորներ բարձր ստերեոսելեկտիվություն են ցուցաբերում տարբեր կենսաբանորեն ակտիվ նյութերի (ամինաթթուների, ամինասպիրտների և այլն) կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Անհրաժեշտ է նշել, որ որոշ մետաղակոմպլեքսներ որպես քիրալային կատալիզատորներ, աշխատում են ինչպես միջֆազային հետերոգեն, այնպես էլ հոմոգեն միջավայրերում [99]:

1.4. Ամինաթթուների ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզ

Ամինաթթուների կիրառական ասիմետրիկ սինթեզի բնագավառում մեծ հետաքրքրության է արժանացել ստեխիոմետրիկ ստերեոսելեկտիվ սինթեզը, որտեղ որպես քիրալային ինդուկտոր կիրառվում է օժանդակ ռեագենտ, որի քիրալային ատոմը ռեակցիայի ընթացքում մակածում է նոր քիրալային կենտրոն՝ դիաստերեոիզոմերների առաջացմամբ: Նման ասիմետրիկ սինթեզները սովորաբար լինում են թերմոդինամիկորեն և

կինետիկորեն վերահսկվող պրոցեսներ:

Ամինաթթուների դիաստերեոսելեկտիվ ստեխիոմետրիկ սինթեզում մեծ ներդրում ունեն Ա.Էվանսը [100], Դ. Զեեբախը [101], ՈՒ. Ծոլլկոպֆը [102], Վ. Օպոլզերը [103] և Յու. Բելոկոնը [104,105]: Նրանց գիտական խմբերի կողմից առաջարկվել են բազմաթիվ մեթոդներ, որոնց մի մասն այսօր ներդրված են արտադրության մեջ:

Վ. Սոլոշոնոկի կողմից առաջարկվել է ստեխոմետրիկ ասիմետրիկ սինթեզի տարբերակ հիմնված քիրալային գլիցինատների օգտագործման վրա [106]: Տրիֆտորէթիլիմինի (**26**) հետ էնանտիոմերապես մաքուր α-ամինոգլիցինատի ռեակցիան ընթանում է բարձր դիաստերեոսելեկտիվությամբ՝ (de=98%) syn-3-տրիֆտորմեթիլ էթիլ -2,3-դիամինաթթվի (**27**) առաջացմամբ (սխեմա 6):

Սխեմա 6



Ասիմետրիկ սինթեզի այն ռեակցիաները, որոնք ընթանում են բարձր էնանտիոսելեկտիվությամբ (90-98%) և չեն պահանջում արտաքին քիրալային ինդուցող ռեագենտի առկայություն, անվանում են «քիրալություն ինքնահարուցող», որոնք առ այսօր հաջողությամբ կիրառվում են ամինաթթուների ասիմետրիկ սինթեզում: Այդ շարքի վերջին հաջող աշխատանքներից է սերինից (**28**) α-մեթիլ-սերինի (**31**) ստացման եղանակը՝ հիմնված մեթիլյոդիդով N-BOC-2-*տրետ*-բութիլ օքսազոլիդինոն-4-կարբօքսիլատի (**29**) ալկիլման ռեակցիայի վրա: Առաջացած **30** C-ալկիլված արգասիքի հիդրոլիզից ստացվում է α-Me-*(S)*-Ser (**31**) [107], (սխեմա 7):

Սխեմա 7



Կ. Նախերան աշխատակիցների հետ առաջարկել է գլիցինի համապատասխան իմինների դիաստերեոսելեկտիվ ալկիլման ռեակցիաներում որպես քիրալային ռեագենտ օգտագործել (*4R,5S*)-1,5-դիմեթիլ-4-ֆենիլիմիդազոլիդին-2-ոնը [108]: N-Պաշ-տրպանված **32** գլիցինատը տետրահիդրոֆուրանում լիթիումի հեքսամեթիլդիսիլազիդի (LHMDS) ներկայությամբ կոնդենսվում է ակտիվացված ալկիլհալոգենիդ-ների հետ, (սխեմա 8): Առաջացած **33** ալկիլված արգասիքից թթվային հիդրոլիզատով անջատվել է **34** նպատակային ամինաթթուն:

Սխեմա 8



R = CH_2=CH-CH_2, $C_6H_5CH_2$

Ինքնավերարտադրվող քիրալության մեթոդը կատարելագործվել և համապատասխանեցվել են օքսազոլիդինոնի եռցիկլիկ նմանակների սինթեզի համար, որոնց ալկիլումը բերում է α-ամինաթթուների առաջացմանը մինչև 60-99% էնանտիոմերային մաքրությամբ [109]:

Սույն բաժնում ուսումնասիրված մեթոդներն ընդհանուր

առմամբ պիտանի են ամինաթթուների α և β-տեղակալված ածանցյալների սահմանափակ քանակով տեսականու ստացման համար: Ունիվերսալ են վերը նշված մեթոդներից մի քանիսը, թեև դրանք էլ հիմնված են թանկարժեք քիրալային օժանդակ ռեագենտների կիրառման վրա:

Հայտնի տվյալների վերլուծությունից պարզվում է, որ կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի CH-թթվայնությունը մեծանում է մետաղի իոնների հետ կոորդինացման արդյունքում [110]: Այդպիսի կոմպլեքսները հիմքի ազդեցությամբ առաջացնում են միջանկյալ կարբանիոններ, որոնք հեշտությամբ կարող են փոխազդել էլեկտրոֆիլների հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ավելի հարմար է կիրառել այնպիսի քիրալային կոմպլեքսներ, որոնց կառուցվածքում լիգանդը հանդես է գալիս ոչ թե ազատ ամինաթթվի, այլ դրա առաջացրած Շիֆի հիմքի տեսքով: Այդպիսի կոմպլեքսներում α-ածխածնի ատոմը բավական շարժունակ է, ֆունկցիոնալ խմբերը պաշտպանված են, իսկ պոլիդենտային լիգանդն առաջացնում է բավական կոշտ տարածական կառուցվածք՝ ապահովելով համակարգի բարձր կայունությունը և էնանտիոմերային էֆեկտների առկայությունը համակարգում: Նշված տեսակետից ավելի հեռանկարային են Յու.Ն. Բելոկոնի խմբի կողմից կատարված աշխատանքները, որտեղ որպես ելային ակտիվ ամինաթթվային սինթոններ կիրառվել են *(S)*-պրոլինի քիրալային կարբոնիլային ամիդի (BPB) և պարզ ամինաթթուների (գլիցինի, ալանինի, դեհիդրոալանինի և այլն) Շիֆի հիմքերի հետ Ni^{II} իոնի առաջացրած **35-38** հարթ-քառակուսային կոմպլեքսները [111,112]:



R=H, Ni^{II}-*(S)*-BPB-Gly, (**35**)
R=CH3, Ni^{II}-*(S)*-BPB-(S)-Ala, (**36**)



Ni^{II}-*(S)*-BPB-D-Ala, (**37**)
Ni^{II}-*(S)*-BPB-*(S)*-D-Ala, (**38**)

(S)-2-N-(N'-բենզիլ պրոլիլ)ամինոբենզոֆենոն քիրալային օժանդակ

ռեագենտի (BPB) և ամինաթթուների (կամ դեհիդրոալանինի)Շիֆի հիմքերի հետNi^{II} իոնի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսները:

Վերոհիշյալ **35-38** կոմպլեքսները բավական կայուն են, դրանց ամինաթթվային մնացորդներն օժտված են բարձր CH-թթվայնությամբ, լավ լուծվում են օրգանական լուծիչներում և գործնականորեն չեն լուծվում ջրային միջավայրում, ինչը զգալի չափով հեշտացնում է ռեակցիոն միջավայրից դրանց հիման վրա սինթեզված նոր ամինաթթվային կոմպլեքսների անջատման և մաքրման գործընթացները:

Նշված կոմպլեքսներում մետաղի կենտրոնական իոնը կոորդինացված է իոնիզացված կարբոքսիլային խմբի թթվածնի, ամիդային խմբի, պիրոլիդինային մնացորդի և Շիֆի հիմքի ազոտի ատոմների հետ: Խելատային օղակները աղավաղված են, N-բենզիլպրոլինի մնացորդի ֆենիլային խումբը էկրանացնում է ամինաթթվային մնացորդին Շիֆի հիմքի հարթության *re* կողմից, դարձնելով *si* կողմը ավելի հասանելի ալկիլող ագենտի համար, ինչը ամինաթթվային փոխարկումների ժամանակ ապահովում է ալկիլման ռեակցիաների բարձր էնանտիոսելեկտիվությանը (*ee*≥90%): Վ.Սոլոշոնոկը և աշխատակիցները կիրառելով նշված կոմպլեքսները, սինթեզել են ֆենիլալանինների տարբեր ֆտորտեղակալված [*(S)*-(2-ֆտոր-, 3-ֆտոր-, 4-ֆտոր-, 3-տրիֆտորմեթիլ-, 2-տրիֆտորմեթիլ-, 4-բրոմ-2-ֆտոր-, 6-քլոր-2-ֆտոր-, 1,2,3,4,5-պենտաֆտոր-ֆենիլալանինների)] ածանցյալներ, ինչպես նաև γ-ω-ֆոսֆոնո-α-ամինաթթուների *(S)*-(2-ամինո-3-ֆոսֆոնոպրոպիո-նաթթվի, 2-ամինո-4-ֆոսֆոնոկարա-գաթթվի և 2-ամինո-5-ֆոսֆոնոպենտանաթթվի) ածանցյալներ [113,114]:

Սխեմա 9



Այս կոմպլեքսների ուսումնասիրությունները հետագա զարգացում են ստացել Յու.Ն. Բելոկոնի և Ա.Ս. Սաղյանի գիտահետազոտական խմբերում: Սինթեզվել են հարյուրավոր նոր ոչ սպիտակուցային α-ամինաթթուներ՝ կողմնային շղթայում ալիֆատիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ տեղակալիչներով, դրանցից որոշները ցուցաբերել են բարձր կենսաբանական ակտիվություն [115-122], (սխեմա 9): Հաշվի առնելով Ni^{II} իոնի ամինաթթվային հարթ-քառակուսային կոմպլեքսների յուրահատուկ հատկությունները (կայունությունը, ստերեոքիմիական իներտությունը, բարձր CH-թթվայնությունը և դեհիդրոամինաթթվային մնացորդի C=C կապի բարձր էլեկտրոֆիլությունը, բարձր էնանտիոմերային էֆեկտների առկայությունը, տեխնո-լոգիական մատչելիությունը և արդյունավետությունը), կարելի է ենթադրել, որ այդ կոմպլեքսներն անկասկած կարող են ծառայել որպես արդյունավետ ելային սինթոներ չհագեցած կապերով նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների առաջացման, տարաբնույթ քրոս-համակցման ռեակցիաներով:

1.5. Քրոս-համակցման ռեակցիաներ

20-րդ դարում քիմիական գիտության ասպարեզում խոշորագույն նվաճումներից էր անցումային շարքի մետաղների կիրառումն քրոս-համակցման ռեակցիաներում որպես կատալիզատորներ: Մետաղի կոորդինացիոն հատկությունները շատ կարևոր է կատալիտիկ ակտիվության դրսևորման համար: Պարզ է, որ մետաղը պետք է ունենա առնվազն երկու հարաբերական կամ կայուն օքսիդացման վիճակ, որն էլ բնորոշ է անցումային շարքի մետաղներին, որոնք սովորաբար կարող են գտնվել մի քանի վալենտային վիճակներով:

Այդպիսի կատալիտիկ ռեակցիաներից են պալադիումի քրոս-համակցման ռեակցիաները [123], որոնք լայնորեն կիրառվում են օրգանական սինթեզում: Պալադիում՝ անցումային մետաղի դերը քրոս-համակցման ռեակցիաներում կայանում է նրանում, որ սկզբից

այն օքսիդանում է օրգանոհալոգենիդի հետ միացմամբ առաջացնելով կոմպլեքս: Քանի որ կատալիտիկ ցիկլում մետաղի դրական օքսիդացման աստիճանն աճում է երկուսով, կարելի է պնդել, որ կատալիզատորը քրոս-համակցման ռեակցիաներում սկզբից կոմպլեքս է ձևավորում ռեագենտներից մեկի հետ, որն այնուհետև արագ քրոս-համակցվում է մյուս ռեագենտի հետ: Կոմպլեքսում իրար հետ փոխազդող երկու մոլեկուլները քրոս-համակցված են և առաջացած C—Pd—C կապի շնորհիվ այդ երկու մոլեկուլները տարածաչափորեն իրար ավելի են մոտիկացված, այսինքն՝ երկու մոլեկուլների ածխածնի ատոմների շփման կենտրոնները իրար ավելի մոտ են գտնվում՝ քրոս-համակցման հետևանքով: Հաջորդ էտապում այդ երկու մոլեկուլները շփման կենտրոններով իրար են միանում՝ առաջացնելով C—C կապ, այսինքն՝ իրար հետ փոխազդող երկու մոլեկուլները Pd-ի միջնորդությամբ համակցվում են (միանում են իրար), իսկ պալադիումը վերականգնում է իր սկզբնական ձևը: Պալադիումի քրոս համակցման ընդհանուր սկզբունքի համաձայն տարբեր գիտական խմբերի կողմից մի շարք ռեակցիաների իրականացման մեթոդներ են մշակել, դրանցից են Սուզուկի [124], Նեգիշիի [125], Ստիլի [126], Սոնոգաշիրայի [127], Հեքի [128], Տսուժի-Տրոստի [129], Հիամայի [130], Կումադայի [131] և այլ գիտական խմբեր:

Մշակված մեթոդները հիմք են հանդիսացել բազմաբնույթ՝ քեմոսելեկտիվ, ռեգիոսելեկտիվ, էնանտիոսելեկտիվ, C—C և C—հետերոատոմ կապերի առաջացման և այլ փոխարկումների իրականացման համար: Pd կատալիզատոր-ների կիրառումն ունի մի շարք առավելություններ, դրանցից են՝ բարձր սելեկտիվությունը, էկոլոգիական մաքրությունը և տնտեսական արդյունավետությունը: Դրանք լայն կիրառություն են ստացել լաբորատոր օրգանական սինթեզում, ինչպես նաև դեղարդյունաբերության, սինթետիկ քիմիական արդյունաբերության մեջ:

Ուսումնասիրելով քրոս-համակցման ռեակցիաներին նվիրված աշխատանքները կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ Pd-ի քրոս-համակցման ռեակցիաները կարելի է բաժանել երկու խմբի. 1).

քրոս-ռեակցիաներ, որոնք ընթանում են օրգանամետաղական միացությունների մասնակցությամբ (Սուզուկիի, Ստիլի, Նեգիշի, Կումանդայի, Սոնոգաշիրեի և այլ ռեակցիաներ) և 2). քրոս-ռեակցիաներ, որոնք ընթանում են առանց օրգանամետաղների մասնակցությամբ, որոնցից է Հեկի ռեակցիան:

Նկարագրածված սկզբունքի համաձայն, քրոս-համակցման ընդհանուր մեխանիզմը կարելի է ներկայացնել 10 սխեմայով:

Սխեմա 10



Pd-ի քրոս-համակցման ռեակցիայի հնարավոր մեխանիզմը, ***A՝*** *օքսիդացման փուլ,* ***B՝*** *տրանսմետաղացման փուլ,* ***C՝*** *քրոս միացման փուլ,* ***D՝*** *β-հիդրիդի էլիմինացման փուլ,* ***E՝*** *վերականգնողական էլիմինացում:*

Քրոս-համակցման ռեակցիաների սկզբունքը համադրելով Ni^{II} իոնի հարթ-քառակուսային քիրալային ամինաթթվային կոմպլեքսների հնարավորությունների հետ կարելի է մշակել կողմնային ռադիկալներում չհագեցած (ալկենային, ալկինային, արոմատիկ և այլ) խմբեր պարունակող էնանտեոմերապես հարստացված նոր սերնդի ոչ սպիտակուցային α-ամինաթթուների ստացման արդյունավետ մեթոդներ:

Արոմատիկ ամինաթթուները նույնպես ունեն օգտակարության լայն շրջանակ՝ հաջողությամբ կիրառվում են բնական միացությունների սինթեզում [132], պեպտիդների քիմիայում [133,134], դեղարդյունաբերության մեջ [135]: Հետևաբար արոմատիկ ամինաթթուների ստացումն ևս արդիական է ու հեռանկարային:

ԳԼՈՒԽ 2

ԿՈՂՄՆԱՅԻՆ ՌԱԴԻԿԱԼՈՒՄ ՉՀԱԳԵՑԱԾ ԽՄԲԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԷՆԱՆՏԻՈՄԵՐԱՊԵՍ ՀԱՐՍՏԱՑՎԱԾ ՈՉ ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ՆՈՐ ԱՄԻՆԱԹԹՈՒՆԵՐԻ ՍԻՆԹԵԶ

(ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ)

2.1. Ելային ամինաթթվային կոմպլեքսների սինթեզը

Ինչպես նշված է գրական ակնարկում, α-ամինաթթուները և հատկապես ոչ սպիտակուցային α-ամինաթթուները օպտիկապես մաքուր էնանտիոմերների տեսքով լայնորեն կիրառվում են բժշկության, դեղագործության և գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում: Դրանց շարքում առավել հեռանկարային են կողմնային ռադիկալներում չհագեցած (ալկենային, ալկինային, արոմատիկ և այլ) խմբեր պարունակող α-ամինաթթուները: Միաժամանակ ապացուցված է, որ դեղաբանորեն ակտիվ քիրալային միացությունները, այդ թվում նաև ամինաթթուներն ու դրանց հենքի վրա կառուցված պեպտիդային և այլ բնույթի պատրաստուկները, պիտանի են բժշկության, դեղագործության և այլ բնագավառներում կիրառելու՝ միայն էնանտեոմերապես հարստացված, առանձին օպտիկական իզոմերների տեսքով: Հետևաբար, ժամանակակից դեղագործական քիմիայի և կենսատեխնոլոգիայի գերագույն խնդիրներից են՝ մշակել և ներդնել արդյունաբերության մեջ այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կարող են ապահովել քիրալային դեղանյութերի անհրաժեշտ

ստերեոիզոմերների առաջացումը բարձր էնանտիոմերային (կամ դիաստերիոմերային) ավելցուկով:

Աշխատանքում նպատակ է դրվել մշակել արդեն իսկ հայտնի Cα-ալկիլման ու քրոս-համակցման մեթոդները և կիրառել կողմնային ռադիկալներում չհագեցած խմբեր պարունակող էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզի համար: Ակնհայտ է, նման խնդրի լուծման համար նախ՝ անհրաժեշտ է օգտագործել համակարգեր, որոնք մատչելի են ամինաթթվային փոխարկումների համար և ի զորու են անկախ հետազոտվող ռեակցիայի բնույթից, ապահովել նպատակային արգասիքի ցանկալի ստերեոիզոմերների բարձր էնանտիոմերային ավելցուկը: Եվ երկրորդ, պետք է օգտագործել C-C կապի գեներացման այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն կտան ամինաթթվի կողմնային ռադիկալ ներմուծել ալկենային, ալկինային և այլ չհագեցած խմբեր:

Ատենախոսական աշխատանքում, որպես ելային ամինաթթվային սինթոններ օգտագործվել են *(S)*- և *(R)*-2-[N-(N`-բենզիլպրոլիլ)ամինո]բենզոֆենոն քիրալային օժանդակ ռեագենտների [*(S)*-BPB և *(R)*-BPB)] և գլիցին, ալանին, α-ալիլգլիցին և α-պրոպարգիլգլիցին ամինաթթուների Ծիֆի հիմքերի հետ Ni^{II}-իոնի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսները: Դրա համար նախ նախկինում մշակված մեթոդով [136] սինթեզվել են գլիցինի և ալանինի համապատասխան կոմպլեքսները՝ Ni^{II}-(S)-BPB-Gly (**1**), Ni^{II}-*(S)*-BPB-*(S)*-Ala (**2**), Ni^{II}-*(R)*-BPB-Gly (**3**), Ni^{II}-*(R)*-BPB-(*R*)-Ala (**4**):



R=H, Ni^{II}-(*S*)-BPB-Gly **(1);**
R=CH_3, Ni^{II}-(*S*)-BPB-(S)-Ala **(3);**



R=H, Ni^{II}-(*R*)-BPB-Gly **(2);**
R=$CH_{3,}$ Ni^{II}-(*R*)-BPB-(*R*)-Ala **(4).**

Սինթեզված կարմիր գույնի քիրալային **1-4** կոմպլեքսների քիմիական մաքրության աստիճանը գնահատվել են նրբաշերտ քրոմատոգրաֆիայի (ՆՇՔ) մեթոդով և հալման ջերմաստիճանների որոշմամբ, իսկ բացարձակ կոնֆիգուրացիան և օպտիկական մաքրության աստիճանը՝ տեսակարար օպտիկական պտույտի որոշմամբ:

Այնուհետև, գլիցինի քիրալային կոմպլեքսների հենքի վրա, նախկինում մշակված մեթոդներով [136] ամինաթթվային մնացորդի ասիմետրիկ Cα-էլեկտրոֆիլ տեղակալ-մամբ սինթեզվել են կողմնային ռադիկալում պրոպարգիլային և ալիլային խմբեր պարունակող ելային ամինաթթվային կոմպլեքսներ:

Ռեակցիաներն իրականացվել են սենյակային ջերմաստիճանում, ացետոնիտ-րիլի (CH_3CN) կամ դիմեթիլֆորմամիդի (DMF) միջավայրում NaOH-ի ներկայությամբ, պրոպարգիլ կամ ալիլբրոմիդը փոխազդեցության մեջ դնելով Ni^{II}-(S)-BPB-Gly (**1**) կամ Ni^{II}-*(R)*-BPB-Gly (**3**) հետ:



Ni^{II}-(*S*)-BPB-(*S*)-PGly **(5)**



Ni^{II}-(*S*)-BPB-(*S*)-AllylGly **(6)**



Ni^{II}-(*R*)-BPB-(*R*)-PGly **(7)**



Ni^{II}-(*R*)-BPB-(*R*)-AllylGly **(8)**

Սինթեզված քիրալային **5-8** կոմպլեքսները CH_3COOH-ով ռեակցիոն միջավայրի չեզոքացումից հետո անջատվել են նստեցմամբ և բյուրեղացվել են: Ընդ որում պրոպարգիլգլիցինի (**5,7**) կոմպլեքսները նստեցվել են ջրից և բյուրեղացվել ացետոնից, իսկ ալիլգլիցինի (**5,8**) կոմպլեքսները նստեցվել են CH_3OH/H_2O (1/1) միջավայրում և բյուրեղացվել մեթանոլից:

Սինթեզված կոմպլեքսների կառուցվածքը, քիմիական ու օպտիկական մաքրությունը որոշվել է ՆԾՔ, հալման ջերմաստիճանի և տեսական օպտիկական պտույտի որոշման մեթոդներով:

Սինթեզված **1-8** կոմպլեքսների նմուշներն այնուհետև օգտագործվել են Cα-ալկիլման և քրոս-համակցման ռեակցիաներում:

2.2. Էլեկտրոֆիլ Cα-ալկիլման ռեակցիաների հետազոտում

2.2.1. (*S*)-α-պրոպարգիլ գլիցինի α-տեղակալված նմանակների ասիմետրիկ սինթեզ

Հաշվի առնելով կողմնային ռադիկալում ացետիլենային և ալկիլային խմբեր պարունակող ոչ սպիտակուցային ամինաթթուների պոտենցիալ կենսաբանական ակտիվությունը, ատենախոսական աշխատանքի սույն բաժնում հետազոտվել է պրոպարգիլ գլիցինի α-դիրք մեթիլային և տեղակալված բենզիլային խմբեր ներմուծելու հնարավորությունը: Դրա համար, որպես ելային ամինաթթվային սինթոն օգտագործվել է պրոպարգիլ գլիցինի կոմպլեքսը՝ Ni^{II}-(*S*)-BPB-PGly (**5**), իսկ որպես ալկիլային խմբի դոնոր՝ մեթիլյոդիդ, *o*- և *պ*-բենզիլբրոմիդներ: Իրականացվել է այդ կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի էլեկտրոֆիլ Cα-տեղակալում՝ հիմնային կատալիզի պայմաններում (սխեմա 1):

Սխեմա 1



o- Եվ *p*-բրոմբենզիլբրոմիդներով ալկիլումն իրականացվել է նախկինում մշակված մեթոդով [136]: Ռեակցիան իրականացվել է սենյակային ջերմաստիճանում DMF/NaOH համակարգում: Տեղակալման արդյունքում առաջանում է նոր դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդ՝ SiO_2-ի թիթեղների վրա R_f-ի բարձր արժեքով (ելային կոմպլեքսի R_f համեմատ): Ռեակցիոն խառնուրդը քացախաթթվով չեզոքացնելուց հետո, արգասիք **9ա,բ** կոմպլեքսները անջատվել են նստեցմամբ (1/1 ջուր/մեթանոլ) և վերաբյուրեղացվել են մեթանոլից: Մեթիլյոդիդի դեպքում ալկիլումը ուսումնասիրվել է տարբեր համակարգերում՝ DMF/NaOH, DMSO/NaOH, DMF/NaH, DMSO/NaH, THF/NaOH և տոլուոլ/NaOH, ինչպես սենյակային ջերմաստիճանում, այնպես էլ տաքացման պայմաններում: Ըստ քիմիական և դիաստերիոմերային ելքերի, լավագույն արդյունք գրանցվել է DMF/NaH համակարգում մինչև 55°C ջերմաստիճանի պայմաններում արգոնի մթնոլորտում: Այս դեպքում ևս առաջանում է R_f-ի ավելի բարձր արժեքով դիաստերեոմեր կոմպլեքսների խառնուրդ: Խառնուրդը քացախաթթվով չեզոքացնելուց հետո արգասիք կոմպլեքսը էքստրակտվել է քլորոֆորմով, քլորոֆորմային էքստրակտը գոլորշիացվել է վակուումում: Չոր խառնուրդից նպատակային **9գ** *(S,S)*-դիաստերեոմերն անջատվել է աշտարակային քրոմատոգրաֆիայի մեթոդով:

Անջատված **9ա-գ** դիաստերեոմեր կոմպլեքսների կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան հաստատվել են ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

Սինթեզված դիաստերեոմեր կոմպլեքսների ամինաթթվային մնացորդների կոնֆիգուրացիան որոշվել է պոլյարոմետրիկ չափումների միջոցով, ինչպես դա արվել էր նախկինում նմանատիպ կառուցվածքով ամինաթթվային կոմպլեքսների համար: 589 *նմ* ալիքի երկարության տակ օպտիկական պտույտի դրական արժեքները վկայում են սինթեզված **9ա-գ** կոմպլեքսների հիմնական դիաստերեոմեր ամինաթթվային մնացորդների α-ածխածնի ատոմի *(S)*-բացարձակ կոնֆիգուրացիայի մասին [(*S,S*)-դիաստերեոմեր]:

Ռեակցիոն խառնուրդում արգասիք կոմպլեքսների *(S,S)*- և *(S,R)*-դիաստերեո-մերների հարաբերությունը (մինչև աշտարակային

քրոմոտոգրաֆիկ բաժանումը կամ բյուրեղացումը) պարզվել է ^{1}Ի ՄՄՌ սպեկտրալ եղանակով՝ կոմպլեքսների N-բենզիլ-պրոլինի մնացորդի բենզիլային խմբի մեթիլենային պրոտոների ազդանշանների ին-տեգրալների հարաբերությամբ՝ 3.23-3.54 *մ.մ.* և 4.15-4.52 *մ.մ.* մարզում, (աղյուսակ 1):

Cα-ալկիլման ռեակցիաների դիաստերեոսելեկտիվությունը կարգավորվում է միայն կինետիկական գործոններով, քանզի ալկիլված կոմպլեքսների ռեակցիոն խառնուրդում բացառվում է տրանսֆորմացումն (միջանկյալ sp^2-հարթ կարբանիո-նային վիճակի ստեղծման անհնարինության պատճառով): Ի դեպ, դա նկատվել էր նախկինում այլ Cα-ալկիլված α-ամինաթթվային կոմպլեքսների ամինաթթվային մնացորդների Cα-ալկիլման ռեակցիաներում:

Էլեկտրոֆիլ ասիմետրիկ տեղակալման ռեակցիաների դիաստերեոսելեկտի-վությունից *(de)* կախված, նպատակային ամինաթթուների անջատման համար կարելի է օգտագործել, ինչպես ռեակցիոն խառնուրդից անջատված արգասիք կոմպլեքսների անհատական մաքուր հիմնական դիաստերեոիզոմերները, այնպես էլ ռեակցիաների արդյունքում առաջացած դիաստերեոիզոմեր կոմպլեքսների խառնուրդը: *de*-ի 85%-ից ցածր արժեքի դեպքում նպատակահարմար է խառնուրդը մինչև աղաթթվային քայքայումը ենթարկել քրոմատոգրաֆիկ բաժանում կամ վերաբյուրեղացման:

Աղյուսակ 1

Պրոպարգիլ գլիցինի կոմպլեքսի Cα-ալկիլման արդյունքները:

Թ.	Ալկիլող ագենտ (**ԱԳ**)	Արգասիք կոմպլեքս			Նպատակային ամինաթթու		
		Թ.	*(S,S)/(S,R)**%	Ելքը,** %	Կառուցվածքը (Թ.)	*ee**** %	Ելքը,** %
1		**9ա**	95/5	60	 **10**[3]	98.2	57

2		**9բ**	96/4	68	 **10μ**	98.9	72
3	CH_3I	**9գ**	92/8	45	 **10·**	97.8	62

**Դիաստերեոիզոմերների հարաբերությունները որոշվել են ^{1}H ՄՄՌ-ի սպեկտրի տվյալների հիման վրա, ըստ N-բենզիլային խմբի մեթիլենային պրոտոնների ազդանշանների ինտեգրալների հարաբերության: **Քիմիական ելքը որոշվել է ըստ անջատված արգասիքի քանակության: ***Էնանտիոմերային ավելցուկը որոշվել է քիրալային ԲԱՀՔ մեթոդով:*

Սույն աշխատանքում սինթեզված օպտիկապես ակտիվ նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների անջատման համար հիմնականում օգտագործվել են մաքուր դիաստերեոիզոմեր կոմպլեքսներ:

Հիմնական **9ա-գ** դիաստերեոմեր կոմպլեքսներից նպատակային ամինաթթվի անջատումը իրականացվել է ստանդարտ մեթոդով [136]: Կոմպլեքսների քայքայումը իրականացվել է մեթանոլի կամ ացետոնի միջավայրում՝ 2N HCl-ի ազդեցությամբ 40-50°C տաքացման պայմաններում՝ մինչև Ni^{II} իոնի հարթ քառակուսային ամինաթթվային կոմպլեքսներին բնորոշ կարմիր գույնի անհետացումը: Աղաթթվային հիդրոլիզատից ելային քիրալային օժանդակ ռեագենտը ֆիլտրմամբ հեռացնելուց հետո, ֆիլտրատն ենթարկվել է աղազրկման H^+ ձևով Ky-2x8 կամ Dowex-50x8 կատիոնափոխանակային խեժերի կիրառմամբ: Աղազրկված լուծույթներից նպատակային ամինաթթուները բյուրեղացվել են ջուր-էթանոլ խառնուրդից: Որոշ դեպքերում ֆիլտրատը ելային BPB քիրալային օժանդակ ռեագենտի հետքերից մաքրելու համար լրացուցիչ էքստրակտվել է նաև քլորոֆորմով:

Անջատված **10ա-գ** նպատակային ամինաթթուների կառուցվածքը, բացարձակ կոնֆիգուրացիան և քիմիական ու էնանտիոմերային մաքրությունը որոշվել է ֆիզիկաքիմիական անալիզի ժամանակակից մեթոդներով (^{1}H և ^{13}C ՄՄՌ սպեկտրասկոպիա, տարրային անալիզ, պոլյարիմետրիկ չափումներ $[\alpha]^D_{20}$, քիրալային ԲԱՀՔ անալիզ, հալման ջերմաստիճան):

Արդյունքում սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված 3 նոր էնանտիոմերապես հարստացված ոչ

սպիտակուցային ամինաթթուներ՝ *(S)*-α-պրոպարգիլգլիցինի նմանակներ, որոնք *α*-դիրքում պարունակում են մեթիլային և *o*-ու *պ*-բրոմբենզիլային տեղակալիչներ:

2.2.2. *(S)*-α-Ալիլալանինի α-տեղակալված նմանակների ասիմետրիկ սինթեզը

Կենսաբանորեն ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների շարքում հատուկ ուշադրության են արժանի հալոգեն պարունակող ֆենիլալանինի և α-մեթիլ-ֆենիլալանինի նմանակները, որոնց բնորոշ են հակամանրէային ակտիվություն, ինչպես նաև՝ ուժեղ հակասեպտիկ և հակաբորբոքային հատկություններ [137]: Տեղին է նշել նաև ալիլգլիցինի ու դրա ածանցյալների մոտ առկա բարձր հակամանրէնային ակտիվությունը ինչպես նաև այն, որ դրանք հանդիսանում են մի շարք ֆերմենտների (GABA տրանսամինազի, գլյուտամատ դեկարբոքսիլազի) ակտիվ ինհիբատորներ [138,139]: Հետևաբար, կարելի է ակնկալել ալիլային և հալոգենով տեղակալված բենզիլային խմբեր պարունակող ոչ սպիտակուցային ամինաթթուների շարքում պոտենցիալ կենսաբանական ակտիվությունների առկայությունը:

Մեր կողմից հետազոտվել են նաև α-ալիլգլիցին ամինաթթվի α-դիրքի բենզոլային օղակի տարբեր դիրքերում հալոգեններով տեղակալված բենզիլային խմբեր ներմուծելու հնարավորությունները: Դրա համար, որպես ելային ամինաթթվային սինթոն օգտագործվել է ալիլգլիցինի կոմպլեքսը՝ Ni^{II}-*(S)*-BPB-*(S)*-AllylGly (**6**) և իրականացվել է այդ կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի ասիմետրիկ էլեկտրոֆիլ Cα-ալկիլում *պ* ու *o*-բրոմբենզիլբրոմիդներով և 3,4-քլորբենզիլքլորիդով, (սխեմա 2):

Սխեմա 2



Փորձ է կատարվել ալկիլումը իրականացնել նախկինում գլիցինի և ալանինի կամ պրոպարգիլի կոմպլեքսների ստացման համար մշակված եղանակով [136], սակայն քիմիական և ասիմետրիկ ցածր ելքերի պատճառով անհրաժեշտություն է առաջացել օպտիմալացնել ռեակցիայի պայմանները: Ալկիլման ռեակցիան փորձարկվել է *ա*-բրոմբենզիլբրոմիդի օրինակի վրա տարբեր համակարգերում և միջավայրերում, ինչպես սենյակային ջերմաստիճանում, այնպես էլ տաքացման և սառեցման պայմաններում (աղյուսակ 2): Cα-ալկիլման ռեակցիայի ընթացքին հարմար է հետևել ՆՇՔ մեթոդով:

Ըստ աղյուսակի տվյալների, լավագույն արդյունքը գրանցվել է DMF/NaOH համակարգում արգոնի մթնոլորտում սկզբից սառեցման, իսկ այնուհետև սենյակային ջերմաստիճանում **ա** ալկիլող ագենտի 1.2 մոլային և հիմքի 5 մոլային ավելցուկի դեպքում: Նույն պայմաններն օգտագործվել են մյուս **բ,գ** ալկիլող ագենտների կոնդեսման ռեակցիաներում: Առաջացած արգասիք դիաստերեոմեր կոմպլեքսները առանձնացվել են աշտարակային քրոմատոգրաֆիայի եղանակով և հետազոտվել են դրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան: Հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսների ամինաթթվային մնացորդների *(S)*-բացարձակ կոնֆիգուրացիան որոշվել է 589 *նմ* ալիքի երկարության տակ օպտիկական պտույտի նշանով:

Աղյուսակ 2

4-Բրոմբենզիլ բրոմիդով α-ալիլգլիցինի կոմպլեքսի Cα-ալկիլման ռեակցիայի պայմանները

Թ.	4-BrBnBr (*մոլ*)	Լուծիչ	Հիմք, (*մոլ*)	Ռեակցիայի ժ/կ (*ոռպե*)	T^0,C	Քիմ. ելքը,* %.
1	1.1	CH_3CN	K_2CO_3 (3)	120	60	<20
2	1.1	CH_3CN	K_2CO_3 (5)	120	20	<20
3	1	CH_3CN	KOH (3)	60	60	30
4	1.2	CH_3CN	KOH (5)	60	20	35
5	1.2	CH_3CN	NaOH (5)	120	20	25
6	1.2	CH_3CN	NaOH (3)	45	65	25
7	1.5	DMF	KOH (3)	45	20	40
8	1.2	DMF	NaOH (3)	45	20	50
9	**1.2**	**DMF**	**NaOH (5)**	**60**	**20**	**75**
10	1.2	DMF	NaOH (5)	60	60	63
11	1.2	DMF	KOH (5)	45	60	40
12	1.2	DMF	NaOH (10)	30	20	35
13	1.2	DMF	K_2CO_3 (5)	100	65	<20

** Արգասիք կոմպլեքսի դիաստեիոմերային խառնուրդի քիմիական ելքն ըստ ՆՇՔ (8, 9 և 10 փորձերի դեպքում քիմիական ելքը լրացուցիչ որոշվել է անջատված կոմպլեքսների չոր զանգվածի կշռով):*

Առաջացած արգասիք դիաստերեոմեր կոմպլեքսները առանձնացվել են աշտարակային քրոմատոգրաֆիայի եղանակով և հետազոտվել են դրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան: Հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսների ամինաթթվային մնացորդների *(S)*-բացարձակ կոնֆիգուրացիան որոշվել է 589 *նմ* ալիքի երկարության տակ օպտիկական պտույտի նշանով:

Արգասիք **11ա-գ** կոմպլեքսների *(SS)*- և *(SR)*-դիաստերեոմերային հարաբե-րությունը որոշվել է ^{1}Ի ՄՄՌ սպեկտրերի հիման վրա՝ ըստ N-բենզիլային մնացորդի մեթիլենային պրոտոնների ազդանշանների ինտենսիվությունների հարաբերության (աղյուսակ 3): Սինթեզված հիմնական **11ա-գ** դիաստերեոմեր կոմպլեքսները ենթար-կվել են աղաթթվային քայքայման և խառնուրդից անջատվել են նպատակային էնան-տիոմերապես մաքուր **12ա-գ** ամինաթթուները նախկինում մշակված մեթոդով [136]:

Աղյուսակ 3

*(S)-α-ալիլգլիցինի կոմպլեքսի (**6**) Cα-ալկիլման արդյունքները:*

Թ.	Ալկիլող ագենտ (**ա-գ**)	Արգասիք կոմպլեքս			Նպատակային ամինաթթու		
		Թ.	(SS)/(SR)*%	Ելքը,** %	Կառուցվածքը (Թ.)	ee*** %	Ելքը,** %
1		**11ա**	94.5/5.5	75	 **12ա**	95.6	71
2		**11բ**	94.2/5.8	78	 **12բ**	96.2	69
3		**11գ**	95.6/4.4	68	 **12գ**	96.8	81

**Դիաստերեոիզոմերի հարաբերությունը որոշվել է, ըստ ^{1}Հ ՄՄՌ սպեկտրների տվյալների. **Քիմիական ելքը որոշվել է ըստ անջատված արգասիքի քանակության. ***Էնանտիոմերային ավելցուկը որոշվել է քիրալային ԲԱՀՔ մեթոդով:*

Այսպիսով, սինթեզվել են *(S)*-ալիլգլիցինի գրականության մեջ չնկարագրված երեք նոր նմանակներ՝ α-դիրքում հալոգենով տեղակալված բենզիլային խմբերի պարունակությամբ՝ *(S)*-2-ամինո-2-(4-բրոմբենզիլ)պենտ-4-ենաթթու (**12ա**), *(S)*-2-ամինո-2-(2-բրոմբենզիլ)պենտ-4-ենաթթու (**12բ**) և *(S)*-2-ամինո-2-(3,4-դիքլորբենզիլ)-պենտ-4-ենաթթու (**12գ**):

Ինչպես նպատակային ամինաթթուների, այնպես էլ դրանց միջանկյալ հիմնական դիաստերեոմեր կոմպլեքսների կառուցվածքը, բացարձակ կոնֆիգուրա-ցիան և էնանտիոմերային մաքրությունը հաստատվել են ժամանակակից անալիզի մեթոդներով (^{1}Հ և ^{13}C ՄՄՌ սպեկտրասկոպիա, ՄԱՍ սպեկտրասկոպիա, պոլյարիմետրիկ չափումներ $[\alpha]^D_{20}$, քիրալային ԲԱՀՔ անալիզ, հալման ջերմաստիճան): Արդյունքները հաստատում են սինթեզված **12ա-գ** նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների և դրանց **11ա-գ** միջանկյալ կոմպլեքսների քիմիական կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիայի իսկությունը, ինչպես նաև վկայում են դրանց բարձր քիմիական ու էնանտիոմերային մաքրության մասին:

2.2.3.Գլիցինի α,α-*բիս*-տեղակալված աքիրալ նմանակների սինթեզ

Այժմ դեղագործության բնագավառում մեծ հետաքրքրություն են ներկայացնում α-ալկիլտեղակալված ամինաթթուները, որոնք ցուցաբերում են հակասեպտիկ, հակաբորբոքային, հակամանրէային ակտիվություն [140]: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ֆենիլալանինի նմանակները [141], հատկապես կողմնային ռադիկալում չհագեցած խմբեր (ալկինային, ալիլային) պարունակող նմանաները [142]:

Ելնելով վերոհիշյալից ատենախոսական աշխատանքի սույն բաժնում հետազոտվել է գլիցինի α,α-երկտեղակալված աքիրալ նմանակների սինթեզի հնարավորությունները միևնույն ալկիլող ագենտով գլիցինի էլեկտրոֆիլ բիս-տեղակալման ճանապարհով: Դրա համար որպես ելային ամինաթթվային սինթոն օգտագործվել է Ni^{II}-*(S)*-BPB-Gly (**1**) կոմպլեքսը:

Սխեմա3



Ուսումնասիրվել է այդ կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի էլեկտրոֆիլ տեղակալումը պրոպարգիլ - (**ա**), ալիլ - (**բ**), 2-բրոմբենզիլ -

(**գ**), 2-ֆտորբենզիլ- (**դ**) և 3-ֆտորբենզիլբրոմիդներով (**ե**), ինչպես հաջորդաբար մոնոտեղակալման հայտնի մեթոդով **(Ա)** [136], այնպես էլ անմիջական երկտեղակալման ճանապարհով **(Բ)**, (սխեմա 3):

Էլեկտրոֆիլ տեղակալման ռեակցիաներն իրականացվել են DMF/NaOH համակարգում, արգոնի մթնոլորտում, սենյակային ջերմաստիճանի պայմաններում:

Աղյուսակ 4

*Գլիցին կոմպլեքսի (**1**) α,α-բիս-ալկիլման արդյունքները :*

Թ.	Ալկիլող ագենտ **աե**	Արգասիք կոմպլեքս			Արգասիք ամինաթթու	
		Թ.	Ելքը,*% **Ա**	Ելքը,*% **Բ**	Կառուցվածքը (Թ.)	Ելքը*%
1		**13ա**	(83, 92) 75.9	45	 **(14³)**	94
2		**13բ**	(80, 89) 71.3	48	 **(14μ)**	91
3		**13գ**	(73, 82) 59.9	44	 **(14·)**	96
4		**13դ**	(68, 76) 47.8	46	 **(14¹)**	71
5		**13ե**	72 (84) 61.2	48	 **(14»)**	72

**Քիմիական ելքը որոշվել է ըստ անջատված արգասիք կոմպլեքսների և ամինաթթուների կշռի.*

Ռեակցիայի ավարտից հետո խառնուրդը չեզոքացվել է CH_3COOH-ով: Արգասիք **13աե** կոմպլեքսները ռեակցիոն միջավայրից անջատվել

են նստեցմամբ 1/10 հարաբերությամբ ջուր/մեթանոլ համակարգից և բյուրեղացվել մեթանոլից: Դրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան հաստատվել են ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով: Արդյունքները բերված են աղյուսակ 4-ում: Ինչպես երևում է ստացված տվյալներից նպատակահարմար է սինթեզն իրականացնել երկփուլանի (սխեմա 3, **Ա**) ալկիլման ճանապարհով, քանի որ միաժամանակյա (**Բ**) երկտեղակալման ժամանակ ելքը չի գերազանցում 50%-ը, իսկ հաջորդաբար՝ մոնոտեղակալմամբ՝ երկտեղակալման դեպքում արգասիք կոմպլեքսների ելքը գերազանցում է 70%-ը՝ հաշվարկված **1** կոմպլեքսի ելային քանակության վրա:

Նպատակային **14ա-ե** ոչ սպիտակուցային աքիրալ α,α-երկտեղակալված ամինաթթուների անջատումը **13ա-ե** արգասիք կոմպլեքսներից իրականացվել է նախկինում մշակված ստանդարտ մեթոդով [136]:

Այսպիսով, սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված հինգ աքիրալ ոչ սպիտակուցային ամինաթթուներ՝ 2-ամինո-2-(պրոպ-2-ին-1-իլ)պենտ-4-ինաթթու (**14ա**), 2-ալիլ-2-ամինոպենտ-4-ենաթթու (**14բ**), 2-ամինո-2-(2-բրոմբենզիլ)-3-(2-բրոմֆենիլ) պրոպանաթթու (**14գ**), 2-ամինո-2-(2-ֆտորբենզիլ)-3-(2-ֆտորֆենիլ)պրո-պանաթթու (**14դ**) և 2-ամինո-2-(3-ֆտորբենզիլ)-3-(3-ֆտորֆենիլ)պրոպանաթթու (**14ե**), որոնց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան պարզաբանվել են սպեկտրալ անալիզի մեթոդներով:

2.3. Ճայրային ալիլային խմբի հիքի վրա Հեքի քրոս-համակցման հետազոտում: Կողմնային ռադիկալում ալկենային կամրջակով կապված ոչ սպիտակուցային α-ամինաթթուների սինթեզ

Բնական ծագմամբ α-ալիլգլիցինը և դրա ածանցյալները [143] օժտված են արտահայտված հակամանրէային ակտիվությամբ, հանդիսանում են գուլուտամատ-դեկարբօքսիլազ մանրէային պրոտեազ, կետափսին, ազոտի օքսիդազ և այլ ֆերմենտների ակտիվ ինհիբիտորներ [144]:

Հաշվի առնելով կողմնային ռադիկալում ալիլային խումբ պարունակող ամինաթթուների և դրանցից կազմված պեպտիդների պոտենցիալ կենսաբանական ակտիվությունն ու կիրառման հեռանկարները, ատենախոսական աշխատանքի սույն բաժնում հետազոտվել է α-ալիլգլիցինի և α-ալիլալանինի մնացորդների հետ տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված արոմատիկ խմբերի Հեքի քրոս-համակցման ռեակցիաները:

Սխեմա 4



Այդ նպատակով որպես ելային ամինաթթվային սինթոններ օգտագործվել են ծայրային ալիլային խմբ պարունակող α-ալիլգլիցինի ու α-ալիլալանինի համապատասխան կոմպլեքսները՝ Ni^{II}-*(S)*-BPB-*(S)*-AllylGly (**6**) Ni^{II}-*(S)*-BPB-*(S)*-AllylAla (**6'**), որոնք սինթեզվել է նախկինում մշակված մեթոդով [136]: Քրոս-համակցման համար որպես sp^2 էլեկտրոֆիլ ագենտներ օգտագործվել են տարաբնույթ (էլեկտրոնոդոնոր, էլեկտրոնակցեպտոր) խմբերով տեղակալված բրոմբենզոլներ (սխեմա 4): Որպես կատալիզատոր օգտագործվել է Հեքի քրոս-համակցման ռեակցիայում սովորաբար կիրառվող պալադիումի տետրակիսը՝ $Pd(PPh_3)_4$, իսկ որպես հիմք՝ դիիզոպրոպիլամին:

Ռեակցիայի օպտիմալ պայմանների մշակման համար α-ալիլգլիցինի (**6**) կոմպլեքսին չտեղակալված ֆենիլբրոմիդի կոնդեսման օրինակի վրա հետազոտվել են տարբեր լուծիչներ, կատալիզատորներ, լիգանդներ, հիմքեր՝ տարբեր հարաբերությամբ,

(աղ. 5): Փորձարկման արդյունքում ընտրվել է լավագույն ելքը ապահովված ռեակցիայի պայմանները (աղ. 5, փորձ 8): Հետագա ռեակցիաները՝ մյուս արիլբրոմիդների հետ իրականացվել են նշված պայմաններում: Դրա համար սկզբում կոլբայի մեջ ավելացվել է բյուրեղային սուբստրատը և ռեագենտը (եթե այն բյուրեղային է, իսկ եթե հեղուկ է՝ ավելացվել է լուծիչից հետո): Այնուհետև արգոնի հոսքի պայմաններում ավելացվել է կատալիզատորը՝ $Pd(PPh_3)_4$, որից հետո ավելացվել է լուծիչը (դիօքսան), այնուհետև ռեագենտը և վերջում ավելացվել է հիմքը՝ NH^iPr_2: Խառնուրդը յուղային բաղնիքի վրա տաքացվել է մինչև 95-100^{0}C և այդ ջերմաստիճանի տակ պահվել է 24 *ժ*:

Աղյուսակ 5

*α-Ալիլգլիցինի (**6**) կոմպլեքսին ֆենիլբրոմիդով (**ա**) քրոս-համակցման ռեակցիայի պայմանների հետազոտման արդյունքները:*

Թ:	**Կատալիզատոր (*մոլ* %)**	**Լիգանդ (*մոլ* %)**	**Լուծիչ**	**Հիմք (*մլ*)**	**T (°C)**	**Ելքը* %**
1	$Pd(PPh_3)_4$ (5)	-	DMF	K_2PO_4	110	36
2	$Pd(PPh_3)_4$(5)	-	DMF	Et_3N	110	63
3	$Pd(PPh_3)_4$(5)	-	DMF	NH^iPr_2(2)	110	77
4	$Pd(PPh_3)_4$ (5)	-	DMF	NH^iPr_2(2)	110	78
5	$Pd(PPh_3)_4$ (5)	-	DMF	NH^iPr_2(2)	110	36
6	$Pd(PPh_3)_4$ (5)	-	տոլուոլ	NH^iPr_2(2)	100	22
7	$Pd(PPh_3)_4$ (5)	-	հեպտան	NH^iPr_2(2)	100	0
8	$Pd(PPh_3)_4$ (5)	-	դիօքսան	NH^iPr_2(2)	100	88
9	$PdCl_2(PPh_3)_2$ (5)	-	դիօքսան	NH^iPr_2(2)	100	38
10	$Pd(OAc)_2$ (5)	PCy_3 (10)	դիօքսան	NH^iPr_2(2)	100	30
11	$Pd(dba)_2$ (5)	XphoS (10)	դիօքսան	NH^iPr_2(2)	100	41
12	$Pd(dba)_2$ (2.5)	$HP^tBu_3BF_4$ (10)	դիօքսան	NH^iPr_2(2)	100	64
13	$Pd(dba)_2$ (10)	$MeP(^tBu)_2$(10)	դիօքսան	NH^iPr_2(2)	100	20
14	$Pd(dba)_2$(5)	dppf (5)	դիօքսան	NH^iPr_2(2)	100	24
15	$Pd(dba)_2$ (5)	dppf (5)	դիօքսան	NH^iPr_2(2)	100	27

**Արգասիք կոմպլեքսի քիմիական ելքը ըստ ՆՇՔ տվյալների: Առավել բարձր ելքերով փորձերի համար քիմիական ելքը լրացուցիչ որոշվել է մաքրված արգասիք կոմպլեքսի չորզանգվածի կշռով:*

Ռեակցիայի ընթացքը և ավարտը վերահսկվել է նրբաշերտ քրոմատոգրաֆիայի մեթոդով: Պրոցեսի ավարտից հետո արգասիք կոմպլեքսը էքստրակտվել է, այնուհետև օրգանական շերտը վակուումի տակ գոլորշացվել է մինչև չոր զանգված, որն այնուհետև մաքրվել է աշտարակային քրոմատագրաֆիայով: Սինթեզված **15ա-ի, 16ա-թ** կոմպլեքսների կառուցվածքը հաստատվել են ժամանակակից ֆիզիկաքիմիական անալիզի (^{1}H և ^{13}C ՄՄՌ սպեկտրասկոպիա, ՄԱՍ սպեկտրասկոպիա, ԲԲՄՍ (HRMS), քիրալային ԲԱՀՔ անալիզ, հալման ջերմաստիճան) մեթոդներով: Արդյունքները բերված են աղյուսակ 5-ում: Բոլոր ռեակցիաներն ընթացել են նշված պայմաններում և ստացվել են սպասվելիք արգասիք կոմպլեքսները 46-92% ելքերով:

Աղյուսակ 6

*α-Ալիլգլիցինի (**6**) և α-ալանինի (**6'**) կոմպլեքսներին արոմատիկ բրոմիդներով (ա-ի և ա-թ) քրոս-համակցման արդյունքները:*

Թ.	Ալկիլող ագենտ **ա-ի** և **ա-թ**	Արգասիք կոմպլեքս		Արգասիք ամինաթթու	
		Թ.	Ելքը,*(%)	Կառուցվածք (Թ.)	Ելք,*(%)
1	2	**3**	4	5	6
1		**15ա**	88	 **17³**	91
2		**15բ**	46	 **17µ**	96
3		**15գ**	85	 **17·**	97
4		**15դ**	83	 **17¹**	83
5		**15ե**	67	 **17»**	80

6		**15q**	63	 **17½**	85
7		**15Է**	29	 **17¿**	83
8		**15ը**	75	 **17Á**	91
9		**15թ**	87	 **17Ã**	87
10		**15ժ**	88	 **17Å**	88

Աղյ ուսակ 6-ի շարուն ակությունը

1	2	**3**	4	5	6
11		**15ի**	87	 **17Ç**	87
12		**16ա**	88	 **18³**	85
13		**16բ**	51	 **18µ**	91
14		**16գ**	92	 **18·**	91
15		**16դ**	89	 **18¹**	93
16		**16ե**	80	 **18»**	57

17		**16զ**	72	 **18½**	93
18		**16Է**	58	 **18¿**	88
19		**16ը**	77	 **18Á**	90
20		**16թ**	81	 **18Ã**	83

**Քիմիական ելքը որոշվել է ըստանջատված արգասիքի կշռի:*

Արձանագրված տվյալների վերլուծությունից եզրակացվել է, որ ռեակցիայի նորմալ ընթացքի համար բացի պայմաններից մեծ նշանակություն ունի նաև հետերոատոմի առկայությունը, տեղակալիչների բնույթը, նրանց էլեկտրոնակցեպտո-րությունն ու էլեկտրոնադոնորությունը, ինչպես նաև դրանց դիրքը ռեակցող կենտրոնի նկատմամբ: Այդ պատճառով էլ առաջին հերթին բարձր ելքեր ապահովվել են այն ռեակցիաներում, որտեղ արոմատիկ էլեկտրոֆիլի ռեակցվող ատոմի *մ*- և *պ*-դիրքերում գտնվում է ուժեղ էլեկտրոնակցեպտոր F-տեղակալիչ: Իսկ, օրինակ՝ նաֆթալինի դեպքում գրանցվել է 58% ելք, ինչը կարելի է բացատրել տարածական գործոնի ազդեցությամբ: Համեմատաբար ցածր ելքեր են արձանագրվել մեթոքսի տեղակալիչով արիլբրոմիդի դեպքում (46%), այս դեպքում բացի հիմնական արգասիք կոմպլեքսից, առաջանում է նաև կողմնակի կոմպլեքս՝ մինչև ≈30% ելքով, որն ըստ ^{1}H և ^{13}C ՄՄՌ տվյալների, արոմատիկ օղակում մեթոքսի խմբի փոխարեն պարունակում հիդրոքսիլ խումբ:

Նպատակային **17ա-ի, 18ա-թ** էնանտիոմերապես հարստացված ամինաթթու-ները անջատվել են համապատասխան **15ա-ի, 16ա-թ** կոմպլեքսներից նախկինում մշակված հայտնի մեթոդով [136]:

Այսպիսով, սույն բաժնում օգտագործվել է Հեքի sp^2-sp^2 քրոս-համակցման ռեակցիայի մեթոդը, սինթեզվել են գրականության մեջ

չնկարագրված 20 նոր էնանտիոմերապես հարստացված ոչ սպիտակուցային ամինաթթուներ՝ *(S)*-α-ալիլգլի-ցինի և *(S)*-α-ալիլալանինի նմանակներ՝ կողմնային շղթայում ալկենային մնացորդի հետ համակցված տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված արոմատիկ խմբերի պարունակությամբ: Որոնց էնանտիոմերային մաքրությունը գերազանցում է *ee*≥99%:

Սինթեզված **17ա-ի** և **18ա-թ** ամինաթթուների ու դրանց **15ա-ի** և **16ա-թ** միջանկյալ կոմպլեքսների կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան հաստատվել են ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

2.4. Ճայրային ալկինային խմբի հենքի վրա Սոնոգաշիրայի քրոս-համակցման հետազոտում: Կողմնային ռադիկալում ացետիլենային կամրջակով համակցված տարաբնույթ տեղակալված *(S)*-α-ամինաթթուների սինթեզ

Գրական տվյալների վերլուծությունից հետևում է, որ բժշկության և դեղագործության մեջ լուրջ հետաքրքրություն կարող են ներկայացնել կողմնային շղթայում ալկինային խմբեր պարունակող օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային α-ամինաթթուները, որոնք տարբեր ֆերմենտային համակարգերի ինհիբիտորներ են: Անշուշտ, ալկինային ամինաթթուների կողմնային ռադիկալ լրացուցիչ ալկենային, բենզիլային և այլ տեղակալիչների ներմուծումը կարող է բերել յուրահատուկ կենսաբանական հատկություններով օժտված պոտենցիալ ակտիվ պատրաստուկների ստացմանը: Այդ կապակցությամբ, ատենախոսական աշխատանքի սույն բաժնում խնդիր է դրվել սինթեզել α-դիրքում ալիլային, տեղակալված բենզիլային խմբեր պարունակող *(S)*-α-պրոպարգիլգլիցինի նմանակներ՝ օգտագործելով Սոնոգաշիրայի

քրոս-համակցման ռեակցիան: Նշված խնդրի լուծումը իրականացվել է երկու ճանապարհով:

Ա. Երբ ծայրային ացետիլենային խումբը գտնվում է ամինաթթվային մնացորդում: Որպես ծայրային ացետիլենային խումբ պարունակող, ելային ամինաթթվային սինթոններ օգտագործվել են *(S)*-BPB քիրալային օժանդակ ռեագենտի հետ *(S)*-2-ալիլ-α-պրոպարգիլգլիցինի և *(S)*-2-(o-բրոմբենզիլ)-α-պրոպարգիլգլիցինի առաջացրած Շիֆի հիմքերի **19,20** նիկելային կոմպլեքսները:

Սխեմա5



Վերջիներս ստացվել են Ni^{II}-*(S)*-BPB-*(S)*-PGly (**5**) կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի էլեկտրոֆիլ Cα-ալկիլմամբ՝ համապատասխանաբար ալիլ և 2-բրոմբե-նզիլբրոմիդներով, (սխեմա 5): Ալկիլումն իրականացվել է նախկինում մշակված եղանակով [136]:

Սխեմա6



Սխեմա 7



Առաջացած երկտեղակալված **19,20** ամինաթթվային կոմպլեքսներն անջատվել են ռեակցիոն միջավայրից ջրից նստեցմամբ, մաքրվել են աշտարակային քրոմատոգրաֆիայի եղանակով և հետազոտվել ու հաստատվել են դրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

Սինթեզված **19,20** կոմպլեքսները հետազոտվել են Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիաներում: Որպես էլեկտրոֆիլ ալկիլող ագենտ աշխատանքում օգտագործվել են տարաբնույթ տեղակալիչներ պարունակող **աբ** և **աի** արոմատիկ բրոմիդներ:

Սխեմա 6-ում և 7-ում ներկայացված են **19** և **20** կոմպլեքսների ամինաթթվային մնացորդների ծայրային ացետիլենային խմբին արոմատիկ բրոմիդների քրոս-համակցման ռեակցիաները:

Պետք է նշել, որ, նախապես α-*օ*-բրոմբենզիլ-α-պրոպարգիլգլիցինի (**19**) հետ *պ*-ֆտորբենզոլի (**ա**) կոմպլեքսների կոնդենսման օրինակի վրա հետազոտվել և օպտիմալացվել են Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի պայմանները (կատալիզատոր, սոկատալիզատոր, հիմք, լուծիչ, ջերմաստիճան): Արդյունքները բերված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի հետազոտման արդյունքները

Թ.	Կատալիզատոր (*մոլ* %)	Սոկատալի-զատոր CuI (*մոլ* %)	Լուծիչ	Հիմք (*մլ*)	T (°C)	Տևողություն (*ժ*)	Ելք*%
1	$PdCl_2(PPh_3)_2$ (5)	10	դիօքսան	NH^iPr_2 (0.5)	90	6	46
2	$Pd(PPh_3)_4$ (5)	10	դիօքսան	NH^iPr_2 (0.5)	90	6	70
3	$Pd(PPh_3)_4$ (5)	10	THF	NH^iPr_2 (0.5)	90	6	58
4	$Pd(PPh_3)_4$ (5)	10	DMF	NH^iPr_2 (0.5)	90	6	64
5	$Pd(PPh_3)_4$ (5)	10	MeCN	NH^iPr_2 (0.5)	90	6	59
6	$Pd(PPh_3)_4$ (5)	10	դիօքսան	Et_3N (0.5)	90	6	45
7	$Pd(PPh_3)_4$ (5)	5	դիօքսան	NH^iPr_2 (0.5)	90	6	57
8	$Pd(PPh_3)_4$ (2.5)	5	դիօքսան	NH^iPr_2 (0.5)	90	6	40
9	$Pd(PPh_3)_4$ (5)	10	DMF	NH^iPr_2 (0.5)	140	6	69
10	$Pd(PPh_3)_4$ (5)	10	դիօքսան	NH^iPr_2(0.25)	90	6	33
11	$Pd(PPh_3)_4$ (5)	10	դիօքսան	NH^iPr_2 (1.0)	90	6	76
12	$Pd(PPh_3)_4$ (5)	10	դիօքսան	NH^iPr_2 (1.5)	90	6	71
13	$Pd(PPh_3)_4$ (5)	10	դիօքսան	NH^iPr_2 (1)	90	6	70
14	$Pd(PPh_3)_4$ (10)	10	դիօքսան	NH^iPr_2 (1)	90	6	71
15	$Pd(PPh_3)_4$ (5)	10	դիօքսան	NH^iPr_2 (1)	90	3	72

**Արգասիք դիաստերոմերային կոմպլեքսի քիմիական ելքը՝ ըստ ՆՃՔ.*

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, լավագույն արդյունքներ են արձանագրվել 5 *մոլ* % $Pd(PPh_3)_4$ կատալիզատորի, 10 *մոլ* % սոկատալիզատորի (CuI) և 1 *մլ* իզոպրոպիլամինի (հիմք) ներկայությամբ, 2 *մլ* դիօքսանի միջավայրում մինչև 90^0C տաքացման պայմաններում (աղ. 7, փորձ 11):

Հաշվի առնելով կատալիզատորի զգայունությունը օդի և խոնավության նկատմամբ, ռեակցիաներն իրականացվել են արգոնի մթնոլորտում: Ընդ որում՝ սկզբում սենյակային ջերմաստիճանի տակ արգոնի մթնոլորտում կոմպլեքսին ավելաց-վել են սոկատալիզատորը, կատալիզատորը և ալկիլող ագենտը (եթե այն բյուրեղային է, իսկ եթե հեղուկ է՝ լուծիչից հետո), այնուհետև ավելացվել է լուծիչը՝ դիօքսանը, որից հետո՝ հիմքը, վերջում խառնուրդի ջերմաստիճանը բարձրացվել է մինչը 90^0C:

Նշված պայմաններում իրականացվել են **19** և **20** կոմպլեքսներին մնացած **բ-ը և աի** արիլբրոմիդների Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիաները: Ռեակցիայի ընթացքը և ավարտը վերահսկվել է նրբաշերտ քրոմոտոգրաֆիայի եղանակով: Ռեակցիան ավարտվելուց հետո խառնուրդը էքստրակտվել է դիքլորմեթան/ջուր լուծիչների համակարգով: Այնուհետև օրգանական շերտը ենթարկվել է վակուում գոլորշիացման՝ մինչև չոր զանգվածի առաջացումը: Արգասիք կոմպլեքսները մաքրվել են աշտարակային քրոմոտագրաֆիայի եղանակով: Արդյունքները բերված են աղյուսակ 8-ում և 9-ում: Աղյուսակների տվյալների վերլուծությունից բխում է, որ հետազոտված համակարգերում Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի արդյունավետությունը, բացի ռեակցիայի պայմաններից, կախված է նաև արոմատիկ օղակում տեղակալիչների բնույթից (էլեկտրոնակցեպտորությունից և էլեկտրոնադոնորությունից), դիրքից, օղակում հետերոատոմի առկայությունից, ինչպես նաև տարածական գործոններից:

Աղյուսակ 8

19 *կոմպլեքսը* ***աը*** *արիլբրոմիդներով Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի արդյունքները*

Թ.	ArBr (**աը**)	Արգասիք կոմպլեքս		Նպատակային ամինաթթու	
		Թ.	Ելքը*%	Կառուցվածք (Թ.)	Ելքը*

					%
1	2	**3**	4	5	6
1		**21ա**	56	 **22³**	94

Աղյուսակ 8-ի շարունակություն

1	2	**3**	4	5	6
2		**21բ**	68	 **22µ**	91
3		**21գ**	59	 **22·**	96
4		**21դ**	75	 **22¹**	71
5		**21ե**	70	 **22»**	95
6		**21զ**	43	 **22½**	72
7		**21է**	57	 **22¿**	64

8		**21ը**	74	 **22Á**	88

**Քիմիական ելքերը որոշվել են արգասիքի (կոմպլեքսների կամ ամինաթթուների) կշռով.*

Սինթեզված քրոմոտոգրաֆիապես մաքուր **21ա-ը** և **23ա-թ** կոմպլեքսներից նպատակային էնանտիոմերապես մաքուր **22ա-ը** և **24ա-թ** ամինաթթուներն անջատվել են նախկինում մշակված ստանդարտ մեթոդով [136]: Անջատված նպատակային ամինաթթուների իսկությունը, քիմիական և օպտիկական մաքրության աստիճանը, հաստատվել են ժամանակակից ֆիզիկաքիմիական մեթոդներով:

Ընդհանուր առմամբ, Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի սույն տարբերակի կիրառմամբ, հաջողվել է սինթեզել *(S)-α*-մեթիլ-(2-բրոմֆենիլ)- և *(S)-α*-ալիլալանինի թվով 17 հատ նոր էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուների նմանակներ, որոնք կողմնային ռադիկալում պարունակում են ացետիլենային կամրջակով կապակցված տարաբնույթ տեղակալիչներ (ֆենիլային, նաֆթիլային, խինոլինային և այլն):

Աղյուսակ 9

***20** կոմպլեքսին արիլ բրոմիդներով Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի արդյունքները:*

Թ.	ArBr (**ա-ի**)	Արգասիք կոմպլեքս		Նպատակային ամինաթթու	
		Թ.	Ելքը*%	Կառուցվածքը	Ելքը*%
1	2	**3**	4	5	6
1		**23ա**	56	 **24³**	87
2		**23բ**	52	 **24μ**	78

3		**23գ**	56	 **24·**	98
4		**23դ**	47	 **24¹**	82
5		**23ե**	70	 **24»**	89

Աղյուսակ 9-ի շարունակություն

1	2	**3**	4	5	6
6		**23զ**	57	 **24½**	96
7		**23է**	74	 **24¿**	86
8		**23ը**	53	 **24Á**	93
9		**23թ**	68	 **24Ã**	89
10		**23ժ**	47	----------	
11		**23ի**	52	----------	

**Քիմիական ելքերը որոշվել են արգասիքի (կոմպլեքսների կամ ամինաթթուների) կշռով.*

Բ. Ծայրային ալկինային մնացորդը գտնվում է ալկիլող ագենտի կառուց-վածքում: Սույն բաժնում հետազոտվել են նաև կողմնային ռադիկալում ացետիլենային կապով համակցված էնանտիոմերապես մաքուր *(S)*-α-ամինաթթուների սինթեզի հնարավորությունը Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի կիրառմամբ, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում ծայրային ալկինային մնացորդը գտնվում է ոչ թե ելային ամինաթթվային մնացորդի, այլ ալկիլող ագենտի կառուցվածքում: Որպես ելային ամինաթթվային սինթոն օգտագործվել է *(S)*-β-(*պ*-բրոմֆենիլ)-α-ալանինի և *(S)*-BPB քիրալային օժանդակ ռեագենտի Շիֆի հիմքի **25** նիկելային կոմպլեքսը, որը ստացվել է նախկինում մշակված եղանակով՝ *պ*-բրոմ-բենզիլբրոմիդով գլիցինի կոմպլեքսի (**1**) ամինաթթվային մնացորդի Cα-ալկիլմամբ: Իսկ որպես ալկիլող ագենտ օգտագործվել են տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված **աթ** ալկիններ (սխեմա 8): Այստեղ նույնպես, նախքան կոմպլեքս **25**-ի հետ տարբեր ալկինների քրոս-համակցման ռեակցիաների իրականացումը, հետազոտվել և օպտիմալացվել են ռեակցիայի պայմանները ֆենիլացետիլենի և կոմպլեքս **25**-ի փոխազդեցության օրինակի վրա: Այդ նպատակով հետազոտվել են տարբեր կատալիզատորներ, լիգանդներ, հիմքեր, լուծիչներ, ջերմաստիճան, բաղադրիչների հարաբերությունը և ավելացման հաջորդականությունը:

Սխեմա 8



Փորձարկման արդյունքում ընտրվել են նշված համակարգում Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիայի լավագույն պայմանները: Դրանք են՝ կատալիզատոր $PdCl_2(PPh_3)_2$ (5 *մոլ* %), սոկատալիզատոր CuI (10 *մոլ* %), լուծիչ՝ DMF, հիմք՝ դիզոպրոպիլամին (3 *էկվ.*) ջերմաստիճանը՝ 55-60^{0}C, սուբստրատ (կոմպլեքս **25**)-ալկին/(**ա**) = 1:1.2 *էկվ.*: Սենյակային ջերմաստիճանում բյուրեղական սուբստրատին (կոմպլեքսին) արգոնի մթնոլորտում ավելացվել է սոկատալիզատորը (CuI), այնուհետև կատալիզատորը ($PdCl_2(PPh_3)_2$), լուծիչը (DMF), ալկինը (**ա**) և վերջում՝ հիմքը ($NH\mathit{i}Pr_2$), միջավայրի ջերմաստիճանը բարձրացվել է մինչև 55-60^{0}C և իրականացվել է ռեակցիան 6 *ժ* ընթացքում: Ռեակցիայի ընթացքը և ավարտը վերահսկվել է նրբաշերտքրոմոտոգրաֆիայի եղանակով: Ռեակցիայի ավարտից հետո արգասիքը էքստրակտվել է դիքլորմեթանով (CH_2Cl_2/H_2O): Այնուհետև օրգանական ֆազը ենթարկվել է վակուում գոլորշիացման՝ մինչև չոր զանգվածի առաջացումը: Վերջինս մաքրվել է աշտարակային քրոմոտագրաֆիայի եղանակով:

Նշված օպտիմալ պայմաններում էլ իրականացվել են մյուս տեղակալված ալկիններին *(S)-(ա-*բրոմֆենիլ)-α-ալանինի (**25**) կոմպլեքսի Սոնոգաշիրայի քրոս-համակցման ռեակցիաները: Արդյունքները բերված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

*Կոմպլեքս **25**-ին տեղակալված **աթ** ալկիններով Սոնոգաշիրայի քրոս-համակցման արդյունքները.*

Թ.	Ալկին (**աթ**)	Արգասիք կոմպլեքս		Նպատակային ամինաթթու	
		Թ.	Ելքը,* %	Կառուցվածքը (Թ.)	Ելքը,* %
		**26ա**	88	 **27³**	89
1		**26բ**	72	 **27μ**	97
2		**26գ**	95	 **27·**	96

3		**26դ**	82	 **27¹**	93
4		**26ե**	70	 **27»**	84
5		**26զ**	76	 **27½**	81
6		**26է**	77	 **27¿**	80
7		**26ը**	47	 **27Á**	69
8		**26թ**	64	 **27Ã**	91

**Քիմիական ելքերը որոշվել են դրանց չորացված կշռով:*

Նպատակային **27ա-թ** էնանտիոմերապես մաքուր ամինաթթուները անջատվել են համապատասխան **26ա-թ** արգասիք կոմպլեքսներից նախկինում Ni^{II}-իոնի հարթ-քառակուսային կոմպլեքսների համար մշակված ստանդարտ մեթոդով [136]: Աղազրկելուց հետո ամինաթթուները բյուրեղացվել են ջուր/էթանոլ միջավայրից: Սինթեզված ամինաթթուների կառուցվածքը, բացարձակ կոնֆիգուրացիան և օպտիկական մաքրության աստիճանը որոշվել են ժամանակակից ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

Արդյունքում հաջողվել է սինթեզել գրականության մեջ չնկարագրված 10 նոր օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուներ՝ ֆենիլային մնացորդի *պ*-դիրքում ացետիլենային կամրջակով տարբեր արոմատիկ և ալիֆատիկ տեղակալիչների հետկապակցված *(S)-β*-ֆենիլ-*α*-ալանինի նմանակներ:

Այսպիսով, ատենախոսական աշխատանքի սույն բաժնում Սոնոգաշիրայի քրոս-համակցման մեթոդի կիրառմամբ հաջողվել է Ni^{II}-իոնի հարթ-քառակուսային ամինաթթվային կոմպլեքսի բազայի վրա 2 ճանապարհով իրականացնել ածխածնի ատոմների ***sp-sp²*** համակցում. 1) ծայրային ալկինը գտնվում է սուբստրատում

(ամինաթթվային մնացորդում), 2) ծայրային ալկինը գտնվում էր ալկիլող ագենտում:

Արդյունքում հաջողվել է սինթեզել **25** նոր էնանտիոմերային մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուներ, որոնք կողմնային շղթայում պարունակում են կապող կամրջակի դեր կատարող ացետիլենային խմբեր, որոնց էնանտիոմերային մաքրու-թյուն գերազանցում է 99%-ը:

4.5 Ֆենիլալանինի հենքի վրա Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիայի հետազոտում: Կողմնային ռադիկալում համակցված արոմատիկ խմբերով էնանտիոմերապես մաքուր *(S)*-α-ամինաթթուների սինթեզը

Ոչ սպիտակուցային α-ամինաթթուների շարքում պոտենցիալ կենսաբանական ակտիվությամբ կարող են օժտված լինել կողմնային ռադիկալում համակցված երկու և ավել արոմատիկ խմբեր պարունակող օպտիկապես ակտիվ α-ամինաթթուները:

Ատենախոսական աշխատանքի սույն բաժնում ներկայացված է ֆենիլալանինի ֆենիլային մնացորդին այլ արոմատիկ խմբերի համակցման հնարավորությունների ուսումնասիրությունը՝ Սուզուկիի-Միաուրայի քրոս-համակցման ռեակցիայի մեթոդի շրջանակներում:

Այդ նպատակով որպես ելային ամինաթթվային սինթոն օգտագործվել է *(S)*–β-(*պ*-բրոմֆենիլ)-α-ալանինի նիկելային կոմպլեքսը (**25**), իսկ որպես ալկիլող ագենտ՝ բորաթթվի տարբեր արոմատիկ տեղակալված ածանցյալները (**ա-լ**), (սխեմա 9): Ինչպես և նախորդ դեպքերում, առաջին հերթին հետազոտվել և օպտիմալացվել են Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիայի պայմանները հետազոտվող համակարգի համար՝ **25** կոմպլեքսին ֆենիլբորաթթվի (**ա**) կոնդենսման օրինակի վրա: Դրա համար փորձարկվել են տարբեր կատալիզատորներ, լիգանդներ, լուծիչներ, հիմքեր և ջերմաստիճանային պայմաններ:

Սխեմա 9



Ցույց է տրվել, որ Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիան **25** կոմպլեքսի և ֆենիլբորաթթվի (**ա**) միջև ընթանում է դիօքսան/տոլուոլ (1:1) միջավայրում մինչև 80^0C տաքացման պայմաններում $Pd(PPh_3)_4$ կատալիզատորի և K_2CO_3 հիմքի ներկայությամբ: Ընդ որում՝ սուբստրատի, ալկիլող ագենտի, հիմքի և կատալիզատորի օպտիմալ քանակների հարաբերությունը հետևյալն է. 1 *էկվ.* սուբ-սրտրատ:1.2 *էկվ.* ալկիլող ագենտ:2 *էկվ.* հիմք:5 *մոլ* % կատալիզատոր: Նշված պայմաններում էլ իրականացվել են արիլբորաթթուների Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիաները 25 կոմպլեքսի ֆենիլային մնացորդի *պ*-դիրքում: Ռեակցիաների ընթացքին հետևել ենք ՆՇՔ մեթոդով: Քրոս-համակցման ռեակցիայի ավարտից հետո առաջացած արգասիք կոմպլեքսները անջատվել են ռեակցիոն միջավայրից դիքլորմեթանով էքստրակտմամբ և մաքրվել են աշտարակային քրոմոտոգրաֆիական եղանակով: Արդյունքները բերված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

*պ-Բրոմֆենիլալանինի (**25**) կոմպլեքսին **ա-լ** տեղակալված արիլբորաթթուների Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիայի արդյունքները:*

Թ.	Ալկիլող ագենտ (**ա-Լ**)	Արգասիք կոմպլեքս		Նպատակային ամինաթթու	
		Թ.	Ելքը*(%)	Բանաձև (Թ.)	Ելքը* %
1		**28ա**	86	 **29³**	96

2		**28բ**	69	 **29µ**	89
3		**28գ**	82	 **29·**	83
4		**28դ**	60	 **29¹**	76
5		**28ե**	72	 **29»**	97
6		**28զ**	55	 **29½**	96
7		**28է**	68	 **29¿**	91
8		**28ը**	75	 **29Á**	95
9		**28թ**	70	 **29Ã**	91
10		**28ժ**	69	 **29Å**	95
12		**28լ**	83	 **29É**	92

**Անջատված կոմպլեքսների և նպատակային ամինաթթուների քիմիական ելքերը հաշվարկվել են դրանց մաքրված չորզանգվածի կշռով:*

Ինչպես նախորդ դեպքերում, այստեղ ևս շատ կարևոր են տարածական գործոնները, հետերոատոմի առկայությունը, տեղակալիչների դիրքը և բնույթը: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, բարձր ելքեր (83-86%) արձանագրվել են բորաթթուների այն ածանցյալների դեպքում, որոնք արոմատիկ օղակում տեղակալիչներ չեն պարունակում, ինչպես նաև բենզոլային օղակի *մ*-դիրքում էլեկտրոնաակցեպտորային տեղակալիչներ պարունակող արիլբորաթթուների դեպքում՝ 69-76% (աղ. 11): Սինթեզված **28ա-լ** արգասիք կոմպլեքսներից նպատակային **29ա-լ** էնանտիոմերապես մաքուր *(S)*-α-ամինաթթուները անջատվել և մաքրվել են նախկինում մշակված մեթոդով [136]: Սինթեզված ամինաթթուների և նրանց միջանկյալ կոմպլեքսների իսկությունը, բացարձակ

կոնֆիգուրացիան և էնանտիոմերային մաքրության աստիճանը որոշվել է ժամանակակից ֆիզիկա-քիմիական անալիզի մեթոդներով:

Այսպիսով, Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիայի կիրառմամբ սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված 12 նոր էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային α-ամինաթթուներ՝ *(S)*-β-ֆենիլ-α-ալանինի նմանակներ, որոնք կողմնային ռադիկալում պարունակում են ֆենիլային օղակի *պ*-դիրքում կապակցված տարաբնույթ տեղակալիչներով տեղակալված արոմատիկ խմբեր, որոնց էնանտիոմերային մաքրությունն գերազանցում է *ee*≥99%:

2.6. Երկտեղակալված ալիլային խմբերի հիման վրա Հեքի քրոս-համակցման ռեակցիայի ուսումնասիրությունը

Հետազոտվել են α,α'-դիալիլտեղակալված գլիցինի ալկենային մնացորդներին արիլբրոմիդների Հեքի քրոս-համակցման ռեակցիաները, նպատակ ունենալով ստանալ α,α'-*բիս*-տեղակալված էնանտիոմերապես հարստացված ամինաթթուներ, որոնց ալիլային խմբերը (կամ խմբերից մեկը) համակցված կլինի տեղակալված արոմատիկ խմբերի հետ: Կողմնային ռադիկալում երկակի չհագեցած ալկենային խմբեր պարունակող ամինաթթուները կարող են օժտված լինել հետաքրքիր կենսաբանական հատկու-թյուններով:

Որպես ելային ամինաթթվային սինթոն օգտագործվել են *(S)*-α-ալիլգլիցին և α,α'-դիալիլգլիցին ամինաթթուների և *(S)*-BPB քիրալային օժանդակ ռեագենտի Շիֆի հիմքերի **6** և **13բ** նիկելային կոմպլեքսները, որոնց ստացումը նկարագրված է 2.1 և 2.2 բաժիններում: Որպես ալկիլող էլեկտրոֆիլ ագենտ հետազոտվել է *պ*-ֆտոր-ֆենիլբրոմիդը, որը այլ սուբստրատների ալկենային խմբերի հետքրոս-համակցման ռեակցիաներում ապահովել է բարձր ելքեր:

Հեքի քրոս-համակցման ռեակցիայի համար օգտագործվել են այդ ռեակցիաների համար արդեն իսկ օպտիմալացված պայմանները, սակայն դրական արդյունք չարձանագրելու պատճառով փորձարկվել են նաև այլ կատալիզատորներ և հիմքեր՝ տարբեր հարաբերություններով: Արդյունքում աքիրալ α,α'-դիալիլտեղակալված գլիցինի կոմպլեքսի (**13բ**) դեպքում չի

հաջողվել իրականացնել ալկենային մնացորդին ոչ *բիս*- և ոչ էլ *մոնո*-քրոս-համակցումը:

Սխեմա 10



Նպատակային ամինաթթվի սինթեզի համար նախ **6** մոնոալիլտեղակալված գլիցին կոմպլեքսի հիման վրա իրականացվել է Հեքի քրոս-համակցման ռեակցիան (ինչպես դա նկարագրված է 1.3 բաժնում), այնուհետև առաջացած արգասիք **15դ** կոմպլեքսի ամինաթթվային մնացորդը ենթարկվել է Cα-ալկիլման ալիլբրոմիդով:

Արդյունքում սինթեզվել է α,α'-դիալիլտեղակալված գլիցինի քիրալային նմանակը, որի ալիլային խմբերից մեկը Csp^2-Csp^2 կապով համակցված է *ա*-ֆտորֆենիլային խմբի հետ, (սխեմա 10):

Սինթեզված **30** արգասիք կոմպլեքսը անջատվել է ռեակցիոն միջավայրից քլորոֆորմով էքստրակտմամբ և մաքրվել է աշտարակային քրոմոտագրաֆիայի եղանակով: Նշված կոմպլեքսից

նպատակային օպտիկապես ակտիվ **31** ամինաթթուն անջատվել է ստանդարտեղանակով [136] և բյուրեղացվել է ջրային էթանոլից:

Այսպիսով, չի հաջողվել իրականացնել *բիս*- կամ *մոնո*-քրոս-համակցում α,α'-դիալիլտեղակալված գլիցինի կոմպլեքսի(**13բ**) ալկենային խմբերի հիան վրա, սակայն սկզբում α-մոնոալիլտեղակալված գլիցինի կոմպլեքսի ալկենային խմբի հեքի քրոս-համակցմամբ և այնուհետև առաջացած ամինաթթվային մնացորդի Cα-ալկիլմամբ, հաջողվել է սինթեզել գլիցինի α,α'-դիալիլտեղակալված քիրալային նմանակը, որի ալիլային խմբերից մեկը համակցված է տեղակալված ֆենիլային մնացորդի հետ:

2.7. Կողմնային ռադիկալում չհագեցած կապեր պարունակող (*R*)-α-ամինաթթուների սինթեզը: Քիրալային ԲԱՀՔ (HPLC) անալիզը

Ընդհանրապես, առաջին անգամ սինթեզված քիրալային մոլեկուլների բացարձակ կոնֆիգուրացիայի և էնանտիոմերային (կամ դիաստերեոմերային) մաքրության որոշման համար ընդունված է օգտագործել քիրալային ԲԱՀՔ (բարձր արդյունավետությամբ հեղուկ քրոմոտոգրաֆիա (HPLC)), իսկ որոշ դեպքերում նաև՝ քիրալային ԳՀՔ (գազ հեղուկային քրոմոտոգրաֆիա (GLC)) մեթոդները: Երկու դեպքում էլ պահանջվում է օգտագործել հետազոտվող ստերեոիզոմերի օպտիկական անտիպոդը:

Այդ նպատակով խնդիր է դրվել ստանալ ատենախոսական աշխատանքում սինթեզված բոլոր նոր *(S)*-α-ամինաթթուների օպտիկական *(R)*-անտիպոդները: Դրանց կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ բազմաթիվ բացարձակ կոնֆիգուրացիայով α-ամինաթթուներ (ինչպես սպիտակուցային, այնպես էլ ոչ սպիտակուցային) այսօր հաջողությամբ կիրառվում են դեղագործության տարբեր ոլորտներում: Հայտնի են բազմաթիվ ժամանակակից հակաքաղցկեղային, հակավիրուսային, հակամանրէային և այլ ազդեցություն ունեցող դեղապատրաստուկներ, որոնք իրենց կառուցվածքում՝ որպես դեղաբանորեն ակտիվ ագլիկոն, պարունակում են *(R)*-ամինաթթու [145]:

Սխեմա 11



Նախկինում ցույց էր տրված, որ ամինաթթվային փոխարկումների ռեակցիաներում որպես ելային ամինաթթվային սինթոններ *(R)*-2-N-(N'-բենզիլպրոլիլ)ամինոբենզոֆենոն քիրալային օժանդակ ռեագենտի [*(R)*-BPB] հիման վրա կառուցված Ni^{II}-իոնի հարթ-քառակուսային ամինաթթվային կոմպլեքսների կիրառումը բերում է համապատասխան *(R)*-բացարձակ կոնֆիգուրացիայով ամինաթթուների առաջացմանը [146]: Այս տեսակետից ատենախոսական աշխատանքի սույն բաժնում, որպես ելային ամինաթթվային սինթոններ, օգտագործվել են *(R)*-BPB քիրալային օժանդակ ռեագենտի և գլիցին, *(R)*-α-ալանին, *(R)*-α-ալիլգլիցին և *(R)*-α-պրոպարգիլգլիցին ամինաթթուների Շիֆի հիմքերի առաջացրած կոմպլեքսները և իրականացվել է դրանց ամինաթթվային մնացորդների Cα-ալկիլման, Սոնոգաշիրայի, Հեքի և Սուզուկիի քրոս-համակցման ռեակցիաները, որոնք ընդհանրացված ներկայացված են սխեմա 11-ում:

